



ԳԼՈՐՈՒՍ



*ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ*

4

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈՒԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4, 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

Սևակ Սարգսյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գագիկ Հարությունյան

Լուսինե Բաղդասարյան

(պատասխանատու քարտուղար)

Խոնարհիկ Քարաուղլանյան

(պատասխանատու խմբագիր)

Ռուբեն Մելքոնյան

Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՇԱՐՎԱԾՔ

Տաթևիկ Քարաուղլանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սևակ Սարգսյան

Հետընտրական զարգացումներն Իրանում 3

Կարեն Վերանյան

Հայաստանի միջազգային վարկանիշը
«Ձախողված երկրների ինդեքսը» և «Բերթելսմանի
տրանսֆորմացիայի ինդեքսը» 7

Արաքս Փաշայան

Միջազգային իսլամական գործոնի
նշանակությունը հայ-ադրբեջանական
հակամարտությունում 21

Լևոն Հովսեփյան

Թուրքիայի անվտանգության ոլորտի
բարեփոխումների շուրջ (ԵՄ առջև ստանձնած
պարտավորությունների համատեքստում) 25

Մերգեյ Սարգսյան

Գազատարների աշխարհաքաղաքականությունը
սևծովյան-կասպյան տարածաշրջանում 34

Միխայիլ Աղաջանյան

Նոր գլոբալ զարգացումներ «խաղաղ առումի»
շուրջ և տարածաշրջանային համագործակցության
պարտադրանք 42

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ

Մեակ Սարուխանյան

Իրանում նախագահական ընտրություններին հաջորդած զարգացումները մեծ արձագանք ստացան միջազգային քաղաքական և լրատվական շրջանակներում: Սակավ չէին կարծիքներն այն մասին, որ Իրանը գտնվում է նոր հեղափոխության նախաշեմին: Մինչդեռ վերջին զարգացումները խոսում են այն մասին, որ իրավիճակը երկրում վերահսկվում է իշխանությունների կողմից:

Իրանում հետընտրական զարգացումների հիմնական և կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ ցույցերը և արյունոտ բախումները ցուցարարների ու անվտանգության կառույցների ուժերի միջև չհանգեցրեց ընդդիմության և նրան պաշտպանող հասարակության մի մեծ հատվածի շրջանում հակահամակարգային կարգախոսների ու նպատակների ձևավորման: Ինչպես ցույցերի առաջին օրերին, այնպես էլ հետագայում ցուցարարների հիմնական պահանջը ոչ թե առանցքային քաղաքական փոփոխություններ իրականացնելն էր, այլ նոր նախագահական ընտրությունները:

Հունիսի 20-ին Միր-Հոսեյն Մուսավին հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որով կոչ արեց իրեն պաշտպանող ցուցարարներին զերծ մնալ բռնություններից և շարունակել ցույցերը միայն խաղաղ ճանապարհով: Նա իր կոչում, ևս մեկ անգամ ընդգծելով, որ հեղափոխական չէ, որպես իր գործողությունների հիմնական ուղենիշ նշեց իսլամական հեղափոխության խորհուրդն ու դրա նպատակները: Հաջորդ օրը Մուսավիի անունից հայտարարություն տարածվեց, ինչն, ի դեպ, հետագայում չհաստատվեց, որ ընդդիմությունը մարմնավորող Մուսավին պատրաստ է որպես շահիդ սեփական կյանքը զոհաբերել հանուն ցուցարարների և արդարության:

Իրանում ծավալված ներքաղաքական պայքարը հունիսի 24-ից՝ փողոցային ցույցերի դադարեցումից հետո, տեղափոխվեց ստվերային դաշտ, որտեղ հիմնական գործող անձինք ոչ թե փողոց դուրս եկած երիտասարդներն էին, այլ իրանական վերնախավի տարբեր բնեռները: Հունիսի 26-ին Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի կազմակերպած՝ մեջլիսի անդամների ամենամյա ընդունելությունը ցույց տվեց, թե որքան է խորացել գործող նախագահից իրանական քաղաքական վերնախավի մի մեծ հատվածի դժգոհությունը: Ընդունելության հրավերն ընդունեցին և հանդիպմանը մասնակցեցին Իրանի խորհրդարանի

290 պատգամավորներից միայն 105-ը: Հանդիպմանը, որի ընթացքում հնչեցվում էին շնորհավորանքներ Մ.Ահմադինեժադի վերընտրման կապակցությամբ, չմասնակցեց նաև խորհրդարանի նախագահ, պահպանողականների ճամբարի հիմնական առաջնորդներից մեկը համարվող Ա.Լարիջանին: Նշենք, որ 290 պատգամավորներից բաղկացած խորհրդարանում այսպես կոչված «բարեփոխիչներն» ունեն ընդամենը 76 պատգամավորներ, այն դեպքում, երբ ընդունելությանը տարբեր պատճառներով հրաժարվել են մասնակցել 185 պատգամավորներ: Սա խոսում է այն մասին, որ գործող նախագահի դեմ ձևավորված ընդդիմության բևեռը կազմված է տարբեր թևերի ներկայացուցիչներից:

Այստեղ ուշադրության է արժանի ևս մեկ կարևոր փաստ: Հունիսի 25-ին Իրանի խորհրդարան պատգամավորական բոլոր խմբակցությունների ղեկավարության հետ հանդիպման էին եկել Մ.Հ. Մուսավիին և Փորձագետների վեհաժողովի նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանին: Առաջին տեղեկությունն այս այցի և տեղի ունեցած հանդիպումների մասին հաղորդեցին Արևմուտքում գործող իրանական ընդդիմադիր գործակալությունները, իսկ պաշտոնական հավաստիացումը Հաշեմի-Ռաֆսանջանիի կողմից ստացվեց միայն մեկ շաբաթ անց:

Նշենք, որ հանդիպումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ համաշխարհային լրատվամիջոցները տարբեր տեղեկություններ էին տարածում Մուսավիի մասին. իբր նա ձերբակալվել է, գտնվում է տնային կալանքի տակ ևն: Սակայն ակնհայտ է, որ Մ.Ահմադինեժադի հակառակորդը բավական ազատ քաղաքական գործունեությամբ է զբաղվում, իսկ նրա ստվերում գտնվելը, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ Մուսավիին ցանկանում է կտրել իրեն ցուցարարների ագրեսիվ և կազմակերպված հատվածի հետ կապող թելը՝ դրանով իսկ խուսափելով անկարգությունների կազմակերպման մեջ մեղադրված լինելուց: Նման վարվելաձև է դրսևորում նաև Հաշեմի-Ռաֆսանջանին, ով հունիսի 29-ին հայտարարություն տարածեց այն մասին, թե անկարգությունները դավադրություն են Իրանի պետության և ժողովրդի նկատմամբ, իսկ դրանց իսկական կազմակերպիչները «ժողովրդից չեն»:

Մեկ շաբաթ անց Հաշեմի-Ռաֆսանջանին կոչ արեց ազատ արձակել բոլոր նրանց, ովքեր կապ չունեն դավադրության կազմակերպման հետ: Նշենք, որ հունիսի երկրորդ կեսին, ըստ իրանական ոստիկանության պաշտոնական տեղեկատվության, անկարգությունների կազմակերպման և իրականացման մեղադրանքով ձերբակալվել է 1000-ից ավելի մարդ:

Թե՛ Մուսավիի և թե՛ Հաշեմի-Ռաֆսանջանիի ցանկությունը՝ խզել կապը ցուցարարների ակտիվ զանգվածի հետ, ամենայն հավանականությամբ արդյունք է այն գիտակցության, որ փողոցային պայքարը և հասարակության կազ-

մակերպված ընդդիմությունը իշխանություններին սպառել են իրենց: Իշխանություններն իրենց հերթին բավական կարևոր քայլ են արել Մուսավիի և նրա քաղաքական կողմնակիցների նկատմամբ՝ որպես պաշտոնական կարծիք և գնահատական տարածելով այն դատողությունը, թե ցույցերի և սպանությունների հետևում կանգնած են արևմտյան ուժերը: Թե ինչպիսին է Արևմուտքի մասնակցությունը Իրանում տեղ գտած քաղաքական ճգնաժամին, այս դեպքում կարևոր չէ: Առաջնային կարևորություն է ներկայացնում այն փաստը, որ Արևմուտքի հետ կապված այս վարկածը ձեռնառու է թե՛ իշխանություններին, թե՛ Մուսավիին՝ թույլ տալով երկուսին էլ խուսափել իրենց հասնող պատասխանատվությունից:

Նշենք, որ հակաարևմտյան և ընդհանրապես իսլամիստական բնույթի քարոզչությունն Իրանում վերջին երկու շաբաթների ընթացքում աճել է: Այն ուղղված է հասարակական որոշակի համախմբվածության ստեղծմանը և ուշադրությունը շեղելուն: Մակայն այն, որոշ դեպքերում, սկսում է հիշեցնել 30-ամյա հնության հետհեղափոխական իրանական քարոզչությունը, որն ուղղված էր բոլոր նրանց դեմ, ովքեր խախտում էին մահմեդականների շահերը: Այսպես, օրինակ, հուլիսի 12-ին հեղինակավոր և ազդեցիկ մեծ այաթուլաներ Մ.Շիրազին և Լ.Գուլիայգային կոչ արեցին իրանական կառավարությանը՝ չլռել Չինաստանի կողմից խաղաղ ույղուր մահմեդական բնակչության ոչնչացման և մահմեդականների դեմ իրականացվող դավադրության վերաբերյալ: Մա՛ այն պայմաններում, երբ Չինաստանը Իրանի կարևորագույն քաղաքական և տնտեսական գործընկերն է հանդիսանում: Նույն օրը Իրանի փոխարտգործնախարար Մ.Սանային հայտարարեց, որ ԱՄՆ կառավարությունը ճնշում է գործադրում Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունների դեկավարության վրա՝ պահանջելով դադարեցնել տնտեսական և քաղաքական հարաբերություններն Իրանի հետ: Ինչ վերաբերում է Իրաքին և Աֆղանստանին, ապա ներքաղաքական ճգնաժամից հետո Իրանի դիրքորոշումն այս երկու երկրներում ամերիկյան ներկայության վերաբերյալ միանգամից կարծրացավ: Միննույն ժամանակ, վերջին երկու շաբաթվա ընթացքում մի քանի անգամ ավելացան գրոհայինների հարձակումներն Իրաքում և Աֆղանստանում տեղակայված ամերիկյան ուժերի վրա, ավելացավ ահաբեկչական ակտերի թիվը:

Մակայն նույն Իրանում ներքաղաքական անկայունության պայմաններում աճել է անհանգստությունը երկրի ազգային և կրոնական փոքրամասնությունների բնակչության շրջաններում: Խոսքն առաջին հերթին Բելուջիստանի մասին է, որի բնակչության մեծ մասն անգամ պաշտոնական տվյալներով քվեարկել էր Մ.Հ. Մուսավիի օգտին՝ հույս ունենալով ազատվել Մ.Ահմադինեժադի շիա-ծայրահեղական վարչախմբից: Մուննի բելուջներով բնակեցված

իրանական այս տարածքում ընտրություններից հետո արդեն երեք խոշոր ահաբեկչական ակտ է կազմակերպվել, որոնց արդյունքում 30-ից ավելի մարդ է զոհվել: Բացառված չէ, որ այս խժոժությունների կազմակերպման մեջ ակտիվ դեր են խաղացել երրորդ պետությունները, սակայն իրանական ներքին կրոնական քաղաքականության մեջ վերջին տարիներին ամրապնդված հակասուննիականությունը պարարտ հող է ստեղծել այդ պետությունների գործունեության արդյունավետության համար:

Վերադառնալով բուն ներքաղաքական զարգացումներին Իրանում՝ պետք է նշել, որ մոտակա շրջանում իշխանությունները հասարակությանն այսպես թե այնպես պետք է ներկայացնեն բախումների մեղավորների և դրանց քաղաքական կազմակերպիչների անունները: Վերջին շրջանում իրանական պետական լրատվամիջոցներում ակտիվացել են հրապարակումները «Մոջահեդդինե Խալք» կազմակերպության և նրա՝ բրիտանական կառավարության հետ ունեցած կապերի մասին: Ամենայն հավանականությամբ հենց «Մոջահեդդինե Խալքը» և բրիտանա-ամերիկյան իշխանությունները կներկայացվեն որպես ընդվզումների և բախումների կազմակերպիչներ, ինչը թե՛ իրանական ղեկավարության և թե՛ Մուսավիի քաղաքական թիմին թույլ կտա մասնակիորեն խուսափել հասարակության առջև պատասխանատվությունից:

Այսպես թե այնպես, քաղաքական թեժ և տեսանելի պայքարն Իրանում դեպի մարում է գնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԸ

«Ձախողված երկրների ինդեքսը» և «Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը»

Կարեն Վերանյան

Հայաստանը շարունակում է բարձր ցուցանիշներ ապահովել միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների զեկույցներում ու հաշվետվություններում: Դա են հաստատում նաև «Ֆորին Փոլիսի Մեգեզին» ամսագրի ու «Ֆանդ Ֆոր Փիս» կազմակերպության՝ վերջերս հրապարակած «Ձախողված երկրների ինդեքսը» 2009թ. զեկույցը, ինչպես նաև գերմանական հեղինակավոր Բերթելսմանի հիմնադրամի նախաձեռնած վերջին՝ 2008թ. «Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը» վարկանիշային նախագծի արդյունքները: Դրանցում ներառված երկրների վարկանիշային արդյունքները ձևավորվել են այդ պետությունների սոցիալ-տնտեսական, քաղաքական մի շարք ցուցիչներից, որոնք թույլ են տալիս վիճակագրական-վարկանիշային համեմատականներ անցկացնել այդ երկրների պետական-քաղաքական կառավարման, պետության կայացածության և այլ հիմնահարցերի շուրջ: Հաշվի առնելով երկու զեկույցներում կիրառված վարկանիշային ուղղվածության ընդհանրությունները՝ նպատակահարմար ենք համարում դրանք ներկայացնել միևնույն հոդվածի շրջանակներում:

1. «Ձախողված երկրների ինդեքսը» 2009թ.

Ս.թ. հունիսի վերջին լույս տեսավ հեղինակավոր «Ֆորին Փոլիսի Մեգեզին» ամսագրի (*Foreign Policy Magazine*) ու «Ֆանդ Ֆոր Փիս» կազմակերպության (*The Fund for Peace*) նախաձեռնած «Ձախողված երկրների ինդեքսը» (*Failed States Index*) վարկանիշային նախագծի 2009թ. զեկույցը: Ներկայացնենք դրանում տեղ գտած՝ Հայաստանի ու հարակից և համադրելի երկրների վարկանիշային արդյունքների համեմատական վերլուծությունը:

Երկու խոսք զեկույցում կիրառված մեթոդաբանության վերաբերյալ. «Ձախողված երկրների ինդեքսը» վարկանիշային հետազոտություններում կիրառված մեթոդաբանությունը հիմնվում է 12 ցուցիչների վրա, որոնք իրենց հերթին դասակարգվում են երեք հիմնական խմբերում՝ սոցիալական, տնտե-

ասկան և քաղաքական: Ստորև տրված աղյուսակի միջոցով կարող եք ծանոթանալ վարկանիշավորման մեթոդաբանական հարցերին: Ձեկույցում նշված երկրների դասակարգումը հիմնված է վերոնշյալ 12 ցուցիչների ընդհանուր գումարային տվյալների վրա: Յուրաքանչյուր ցուցիչի համար ընտրված վարկանիշային թիվը դասակարգված է 0-10 թվային սանդղակով, որտեղ 10 թիվը համարվում է բարձրագույն՝ բացասական կետը, 0 թիվը՝ ցածրագույն՝ լավագույն կետը:

Աղյուսակ 1

«Չախտղված երկրների ինդեքսի» 12 ցուցիչները

№	ցուցիչներ
<i>սոցիալական ցուցիչներ</i>	
1.	ժողովրդագրական ազդեցություն
2.	փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ
3.	դժգոհ զանգվածների գործոն
4.	մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք
<i>տնտեսական ցուցիչներ</i>	
5.	հասարակական խմբերի միջև տնտեսական զարգացման անհավասարություն
6.	կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում
<i>քաղաքական ցուցիչներ</i>	
7.	պետության քրեականացում և/կամ ապալեզիտիմացում
8.	պետական գործառույթների շարունակվող վատթարացում
9.	մարդու իրավունքների համատարած խախտում
10.	անվտանգության կառույցների ուժեղացում. նրանց հանդես գալը որպես պետություն պետության ներսում
11.	կլանային վերնախավերի ազդեցության մեծացում
12.	օտար երկրների միջամտություն կամ արտաքին գործոններ

«Չախտղված երկրների ինդեքսը» վարկանիշային հետազոտություններում երկրները, ըստ ձախտղվածության աստիճանի, դասակարգվում են 4 հիմնական խմբերում՝

1. Ահագանգող ինտենսիվության երկրներ (վատագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը ներառված է 90.1-114.2 միավորների միջև)
2. Նախազգուշացնող (60.1-89.9)
3. Միջին (31.2-59.9)
4. Կայուն (լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը ներառված է 16.8-29.7 միավորների միջև):

«Ձախողված երկրների ինդեքսը» 2009թ. զեկույցը

Ինչպես «Ձախողված երկրների ինդեքսը» վարկանիշային նախորդ հետազոտություններում (2006-2008թթ.), այնպես էլ 2009թ. զեկույցում Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրք է զբաղեցրել, այն տարբերությամբ միայն, որ եթե նախորդ զեկույցներում Հայաստանն իր վարկանիշով, որպես կանոն, գլխավորել է ԱՊՀ երկրների ցուցակը, ապա վերջին՝ 2009թ. զեկույցում զիջում է Ղազախստանին և Ուկրաինային: Ինչպես պատկերված է ստորև ներկայացված աղյուսակում, զեկույցում ընդգրկված 177 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 101-րդ տեղը՝ արձանագրելով 74,3 միավոր ու զիջում է Ղազախստանին և Ուկրաինային, որոնք համապատասխանաբար զբաղեցրել են 105 և 110-րդ հորիզոնականները: Հայաստանի վարկանիշն անհամեմատ գերազանցում է նաև հարևան Թուրքիայի ցուցանիշը, որը զբաղեցնում է 85-րդ դիրքը՝ 78,2 միավորով:

Ինչ վերաբերում է Հայաստանի հարևան երկու հանրապետությունների վարկանիշներին, ապա առավել ցածր արդյունք գրանցվել է մասնավորապես Վրաստանում, որը զբաղեցնում է 33-րդ տեղը՝ 91,8 միավորով: Ընդ որում՝ ի տարբերություն նախորդ զեկույցների, որտեղ Վրաստանը, որպես կանոն, գտնվում էր երկրորդ՝ *նախազգուշացնող* գոտում, 2009թ. այդ հանրապետությունն առաջին անգամ անցումային կամ որակական հետընթաց է արձանագրել և անցել առաջին՝ վատթարագույն գոտի (*սհազանգող ինտենսիվության երկրներ*): Վրաստանի վարկանիշի կտրուկ վատթարացումը, թերևս, պետք է պայմանավորել վերջին շրջանում երկրի արտաքին ու ներքին զարգացումներով (2008թ. վրաց-ռուսական պատերազմ, միջազգային հանրությունում Վրաստանի ղեկավարության հեղինակության անկում, իշխանություն-ընդդիմություն հակասություններն ու բախումները, ներքաղաքական ճգնաժամ): ԱՊՀ երկրներից վատթարագույն խմբում են ընդգրկվել նաև Ուզբեկստանն ու Տաջիկստանը, որոնք համապատասխանաբար ունեցել են 92,8 և 90,3 միավոր: Զեկույցի վատթարագույն խմբում ներառված երկրների ցուցակն ամփոփում է Իրանը՝ 90 միավորով: Ինչ վերաբերում է հարավկովկասյան մյուս հանրապետությանը՝ Ադրբեջանին, ապա վերջինիս վարկանիշը, ինչպես և նախորդ զեկույցներում, հիմնականում պահպանում է իր արդյունքը՝ ԱՊՀ երկրների շարքում զբաղեցնելով միջնամասային դիրքեր: 2009թ. զեկույցում Ադրբեջանը զբաղեցնում է 56-րդ հորիզոնականը՝ 84,6 միավորով:

2008թ. համեմատությամբ, ս.թ. զեկույցում հարավկովկասյան երեք երկրներն էլ իրենց վարկանիշներում հետընթաց են արձանագրել, չնայած նրան, որ երկու զեկույցներում էլ ընդգրկված երկրների քանակը եղել է նույնը՝ 177 պետություն: Հանգամանքը, թերևս, պետք է պայմանավորել այդ երկրների ներքաղաքական զարգացումներով, հարավկովկասյան տարածաշրջանի

ռազմաքաղաքական վերջին տեղաշարժերով, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի թողած հետևանքներով: Այսպես, եթե 2008թ. Հայաստանը զբաղեցրել է 109-րդ հորիզոնականը՝ 70,7 միավորով, ապա 2009թ. Հայաստանի դիրքը 101-ն է՝ ավելի ցածր՝ 74,3 միավորով: Նույնը կարելի է նկատել նաև Ադրբեջանի պարագայում (Վրաստանի դեպքում գործ ունենք որակական կամ անցումային փոփոխության հետ, որի մասին արդեն խոսվեց), 2008թ. արձանագրված 81 միավորը (64-րդ դիրք) այս տարվա զեկույցում փոխարինվեց ավելի ցածր՝ 84,6 միավորով (56-րդ դիրք):

Աղյուսակ 2

«Ձախողված երկրների ինդեքսը» 2009թ., Հայաստան և հարակից երկրներ

Ժամկետ	Երկիր	Ցուցիչները (Ց)												Ընդամենը փոփոխվել է
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
ԱՊՀ երկրներ														
31	Ուզբեկստան	7,9	5,3	7,4	7	8,7	7,2	9	6,6	9,2	9	9	6,5	92,8
33	Վրաստան	6,4	8,3	8,5	6	7,5	6	9	6,3	7,5	7,9	8,9	9,5	91,8
37	Տաջիկստան	8,2	6,4	6,9	6,5	7,3	7,5	8,9	8,6	8,6	7,5	8,4	6,5	90,3
42	Ղրղզստան	8	5,3	7,2	7,5	8,3	7,6	8,3	6,5	7,6	7,7	7,3	7,8	89,1
54	Մոլդովա	6,6	4,2	7,1	8	7	6,8	8,1	6,7	7	8	8	7,6	85,1
56	Ադրբեջան	6,4	8,2	7,9	5,7	7,4	6,1	8,2	5,5	7	7,3	7,9	7	84,6
59	Թուրքմենս.	7	4,8	6,5	5,6	7,6	6,9	8,5	7,2	8,9	7,6	7,7	6	84,3
66	Բելառուս	7,2	4,1	6,9	5	7,2	6,6	8,9	6,6	8	6,6	8,1	7,1	82,3
71	Ռուսաստան	7	5,9	7,5	6,2	8,1	4,6	8	5,7	8,3	6,9	8	4,6	80,8
101	Հայաստան	5,9	7,2	6	6,7	6,5	5,3	7,1	5,4	6,1	5,3	6,9	5,9	74,3
105	Ղազախս.	6	3,9	5,5	4	6,4	6,4	7,7	5,3	6,8	6,5	7,6	6,4	72,5
110	Ուկրաինա	6,1	3	6,9	7,1	6,4	5,5	7,2	4,2	5,5	3,3	7,9	6,6	69,7
Արևելյան/Գենտր. Եվրոպայի և մերձբալթյան երկրներ														
128	Բուլղարիա	4,7	3,8	4,4	6	6,3	5	6	5	4,8	5,3	4,6	5,6	61,5
129	Ռումինիա	5,6	3,4	5,5	5,1	5,8	5,3	6,2	5	4,5	4,3	5,1	5,5	61,3
136	Լատվիա	4,5	4,5	4,5	5	6,2	5,5	5,1	4,4	3,7	2,9	4,3	4	54,6
140	Էստոնիա	4,7	4,4	4,9	4	5,4	4,4	4,7	3,5	3,5	2,5	5,5	3,7	51,2
142	Լեհաստան	4,9	3	3,2	6,1	4,9	4,8	4,4	3,9	4	2,3	3,7	4,4	49,6
145	Լիտվա	4,5	2,8	4,2	5,2	6,2	4,7	4,1	3,4	3,5	2,1	3	4,3	48
147	Հունաստան	4,5	2,7	4,4	4,7	4,8	4	4,5	3,9	3,6	3,5	2	3,5	46,1
Այլ երկրներ														
38	Իրան	6,5	8,5	7,6	6,8	7,4	5,5	8,3	6	8,9	8,6	9,1	6,8	90
85	Թուրքիա	6,8	6,6	7,7	5	8	5,3	6,5	5,3	6	7	7,8	6,2	78,2

Աղյուսակ 3

«Չախտողված երկրների ինդեքսը» 2008թ., Հայաստան և հարակից երկրներ

Տվյալներ	Երկիր	Ցուցիչները (Ց)												Ընդամենը
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
ԱՊՇ երկրներ														
26	Ուզբեկստան	7.7	5.4	7.1	7.1	8.6	7.7	9.3	6.8	9.2	9.0	9.2	6.3	93.4
38	Տաջիկստան	7.9	6.1	6.5	6.4	7.3	7.0	9.2	7.1	8.8	7.8	8.6	6.2	88.9
39	Դրոբզստան	7.5	5.8	6.8	7.8	8.0	7.5	8.4	6.5	7.9	8.1	7.5	7.4	88.8
46	Թուրքմենստան	7.0	4.5	6.2	5.6	7.3	7.1	8.7	7.7	9.6	8.3	7.9	6.3	86.2
50	Մոլդովա	7.0	4.7	7.3	8.4	7.2	7.2	8.3	7.0	7.1	6.5	7.7	7.3	85.7
53	Բելառուս	7.7	4.3	6.7	5.0	7.2	6.7	9.3	6.6	8.8	6.5	8.5	7.1	84.4
56	Վրաստան	6.3	6.8	8.1	5.7	6.9	5.4	8.4	5.9	5.7	7.7	8.3	8.4	83.8
64	Ադրբեջան	6.0	7.8	7.3	5.3	7.0	5.9	8.1	5.5	6.9	7.2	7.5	6.5	81.0
72	Ռուսաստան	7.0	5.4	7.5	6.5	7.9	3.7	7.9	5.9	8.7	7.0	8.0	4.2	79.7
101	Ղազախստան	6.2	3.6	5.2	4.0	6.5	6.0	7.7	5.5	6.8	6.5	7.8	6.6	72.4
108	Ուկրաինա	6.5	3.2	7.2	7.3	6.7	5.0	7.3	4.5	5.9	3.0	7.9	6.3	70.8
109	Հայաստան	5.8	7.5	5.0	6.7	6.0	5.6	6.5	6.0	5.5	4.5	6.0	5.6	70.7
Արևելյան/Գենտր. Եվրոպայի և մերձբալթյան երկրներ														
112	Կիպրոս	4,9	4,2	8,3	5,2	7,5	4,2	5,5	3,8	3,5	5	8,4	9,2	69,7
128	Ռումինիա	5,3	3,5	5,2	5,2	6,1	5,2	5,9	5,2	4,8	3,4	4,7	5,4	59,9
131	Բուլղարիա	5,1	4,1	4	5,7	6	4,3	5,4	4,6	4,7	5,2	3,9	5,5	58,5
136	Լատվիա	4,9	4,9	4,6	5	6	5	4,7	4,2	3,8	3	4,4	4	54,5
139	Էստոնիա	4,8	4,8	5,1	4	4,9	3,7	4,8	3,8	3,5	2,6	5,7	3,3	51
143	Լիտվա	4,9	3,1	3,9	5,4	6,2	4,5	4,4	3,5	3,5	2	3	4,3	48,7
145	Լեհաստան	4,8	3	3,2	6,4	4,8	4,3	4,2	3,8	3,8	2	3,3	4	47,6
149	Չեխիա	3,8	3,1	3,2	4,8	3,9	3,4	3,7	3,8	3,5	2	3,5	3,4	42,1

Հարավային Կովկասի երկրների վարկանիշի ենթացուցիչների 2008-2009թթ. համադրում

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2008թ. համեմատությամբ, ս.թ. «Չախտողված երկրների ինդեքսը» զեկույցում Հարավային Կովկասի հանրապետությունների վարկանիշային ենթացուցիչները, ընդհանուր առմամբ, հետընթաց են արձանագրել: Սակայն երեք երկրների վարկանիշների ենթացուցիչների համեմատականի կարևոր առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն Հայաստանի, հարևան երկու երկրների բոլոր ենթացուցիչներն են վատթարացել (բացառությամբ Ադրբեջանի 8-րդ՝ *պետական գործառույթների շարունակվող վատթարացում* ենթացուցիչ, որը նույնությամբ պահպանել է նախորդ տարվա 5,5 ցուցանիշը): Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա վեր-

զինիս վարկանիշային երեք ենթացուցիչներում (2-րդ՝ *փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ*, 6-րդ՝ *կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում և 8-րդ՝ պետական գործառույթների շարունակվող վատթարացում ենթացուցիչներ*) 2008թ. համեմատությամբ առաջընթաց է արձանագրվել: Իսկ 4-րդ՝ *մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք* ենթացուցիչը պահպանել է 2008թ. 6,7 միավորը (*ենթացուցիչների համեմատականին մանրամասն կարող էք ծանոթանալ Աղյուսակ 4-ից*):

Աղյուսակ 4

Հարավային Կովկասի երկրների վարկանիշի ենթացուցիչները, 2008-2009թթ.

Տարի	Դիրք	Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	Ընդհանուր
Հայաստան														
2008	109	5.8	7.5	5.0	6.7	6.0	5.6	6.5	6.0	5.5	4.5	6.0	5.6	70.7
2009	101	5.9	7.2	6	6.7	6.5	5.3	7.1	5.4	6.1	5.3	6.9	5.9	74.3
Ադրբեջան														
2008	64	6.0	7.8	7.3	5.3	7.0	5.9	8.1	5.5	6.9	7.2	7.5	6.5	81.0
2009	56	6.4	8.2	7.9	5.7	7.4	6.1	8.2	5.5	7	7.3	7.9	7	84.6
Վրաստան														
2008	56	6.3	6.8	8.1	5.7	6.9	5.4	8.4	5.9	5.7	7.7	8.3	8.4	83.8
2009	33	6.4	8.3	8.5	6	7.5	6	9	6.3	7.5	7.9	8.9	9.5	91.8

2. Բերթելսմանի հիմնադրամ. «Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը» 2008թ.

Ներածական

Բերթելսմանի հիմնադրամը ստեղծվել է 1977թ. Գերմանիայում Ռեյ-հարդ Մոհնի կողմից և ներկայում երկրի խոշորագույն հիմնադրամն է: Մինչ օրս հիմնադրամն իրականացրել է ընդհանուր առմամբ 700 նախագիծ, որոնց հատկացվել է շուրջ €660 մլն: 2005թ. ֆինանսական տարում Բերթելսմանի հիմնադրամի բյուջեն հաշվվում էր շուրջ €57 մլն: Բերթելսմանի հիմնադրամն իր գործունեությունը հիմնականում ուղղորդում է տարբեր հասարակություններում սոցիալական բարեփոխումների տանող նախաձեռնություն-

ներին: Հասարակությունում սոցիալական դրական տեղաշարժերի արդյունավետության ապահովման նպատակով հիմնադրամը համագործակցում է տարբեր մասնագիտացած ինստիտուտների ու կազմակերպությունների, պետական կառույցների հետ, նպաստում պետական պատասխանատուներին ոլորտում որոշումների կայացման հարցում: Այս տեսանկյունից հիմնադրամը ներկայանում է թե՛ որպես «ուղեղային կենտրոն», թե՛ սոցիալական բարեփոխումների գործակալություն: Հիմնադրամի շրջանակներում իրականացվող նախագծերը վերաբերում են ինչպես կրթական, առողջապահական, մշակութային, այնպես էլ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, կառավարման հիմնահարցերին թե՛ Գերմանիայում և թե՛ ընդհանրապես եվրոպական ընտանիքում ու նրա սահմաններից դուրս:

Քաղաքականության հիմնահարցերի կարգավորմանը միտված նախագծի շրջանակներում, ի թիվս ժողովրդագրական բարեփոխումների, արդի կառավարման, ֆեդերալիզմի, ժողովրդավարության ու ինտեգրման, ինչպես նաև Եվրոպա կոչվող ծրագրերի, հիմնադրամի ղեկավարությունը զգալի կարևորություն է տալիս միջազգային քաղաքականության ծրագրին: Վերջինս ներառում է մի քանի ենթածրագրեր.

- Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքս
- Հրեական հասարակություն
- Մերձավոր Արևելք
- Անվտանգության քաղաքականություն
- Բերթելսմանի միջազգային ֆորում-2006
- Բերթելսմանի բարեփոխումների ինդեքս:

«Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը» (FSI)

Փորձենք կենտրոնանալ առաջին ենթածրագրի՝ «Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքս» վարկանիշային վերլուծության հարցերի վրա: Վարկանիշային հետազոտությունը գլոբալ վարկանիշավորման նախագիծ է, որը վերլուծում ու գնահատում է 125 զարգացող և անցումային երկրներում զարգացման ու տրանսֆորմացիոն գործընթացները (քաղաքացիական հասարակություն, ժողովրդավարություն, շուկայական տնտեսություն, քաղաքական-պետական կառավարման հարցեր և այլն): Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը ենթադրում է վարկանիշավորման երկու հիմնական ուղղություն՝ «քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» ինդեքս (*Status index*) ու «ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարումը» ինդեքս (*Management index*):

ա. «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» ինդեքս (Status index)

Աղյուսակ 3-ում տրվում է ԲՏԻ 2008թ. «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» ինդեքսի վարկանիշային վիճակագրությունը, որտեղ քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների վարկանիշային ցուցիչները նախ տրվում են առանձնացված, իսկ հետո՝ ամփոփ, ընդհանուր ցուցանիշով: Նշենք նաև, որ քաղաքական տրանսֆորմացիաների վարկանիշի ձևավորման համար կիրառվել են հինգ, իսկ տնտեսական տրանսֆորմացիաների դեպքում՝ յոթ չափորոշիչներ (տե՛ս Աղյուսակ 1): Նախագծում ընդգրկված երկրների քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների վարկանիշների աստիճանավորումը սահմանվում է հետևյալ 10-1 թվային դասակարգման միջոցով, որտեղ 10-ը համարվում է լավագույն, 1-ը՝ վատագույն թվային ցուցանիշը: Ընդգրկված երկրները դասակարգված են նաև ըստ վարկանիշային աստիճանակարգման (օր.՝ լավագույն ցուցիչներ ունեցող, ամենաառաջատար, սահմանափակ և այլն), ինչը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1

Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների չափորոշիչները, 2008թ.

<i>Քաղաքական տրանսֆորմացիա</i>	<i>Տնտեսական տրանսֆորմացիա</i>
պետականակենտրոնություն/stateness	սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ
քաղաքական մասնակցություն	շուկայի և մրցակցության կազմակերպում
օրենքի գերակայություն	արժույթ և գնային կայունություն
ժողովրդավարական ինստիտուտների կայունություն	մասնավոր սեփականություն
քաղաքական և սոցիալական ինտեգրում	սոցիալական բարեկեցություն/welfare regime
	տնտեսական բնութագիրը
	կայունություն, կայուն զարգացում/sustainability

Աղյուսակ 2

Ընդգրկված երկրների վարկանիշային աստիճանակարգումը, փակագծերում նշվում է 2008թ. երկրի զբաղեցրած դիրքը

<i>Վարկանիշային աստիճանակարգում</i>	<i>Թվային սանդղակ</i>
Լավագույն	9,56-9,14 (1-7)
Ամենաառաջատար	8,99-7,52 (8-22)
Առաջատար	7,47-6,15 (23-51)
Մահմանափակված	6,14-4,78 (52-83)
Շատ սահմանափակված	4,72-3,39 (84-113)
Չախողված	3,39-1,36 (113-125)

Վարկանիշային վերլուծությունում ներկայացված «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» նախագծում առանձնացվում են Արևելյան/Կենտրոնական Եվրոպայի, մերձբալթյան, ինչպես նաև ԱՊՀ երկրները, որոնց ամփոփ ցուցանիշները համադրելի են Հայաստանի վարկանիշի հետ: Բացի այդ երկրներից, աղյուսակում բերվում են նաև Հայաստանի հարևան մյուս երկրների՝ Թուրքիայի և Իրանի վարկանիշային արդյունքները: *Աղյուսակ 3-ում* ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ ԱՊՀ երկրներից լավագույն ամփոփ ցուցանիշներն արձանագրել են Ուկրաինան (6,93 միավորով), Վրաստանն (6,60) ու Հայաստանը (6,41), որոնք տեղակայվել են երրորդ՝ *առաջատար* երկրների վարկանիշային աստիճանակարգում (այս սանդղակում է գտնվում նաև Թուրքիան): Վերջիններիս իրենց վարկանիշներով հաջորդում են Ռուսաստանը, Մոլդովան, Ղրղզստանն ու Ղազախստանը, որոնք ընկնում են չորրորդ՝ *սահմանափակված* վարկանիշային աստիճանակարգում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, վերջինս տեղակայվում է նախավերջին՝ *շատ սահմանափակված* երկրների վարկանիշային աստիճանակարգում՝ ի թիվս Չինաստանի, Բելառուսի, Իրանի, Տաջիկստանի:

Հետաքրքիր վիճակագրություն է ստացվում առանձնացված երկրների 2008 և 2006թթ. վարկանիշային արդյունքների համադրությունից: Պարզվում է, որ մասնավորապես ԱՊՀ երկրների շարքից 2006թ. համեմատությամբ 2008թ. վարկանիշով կտրուկ աճ է արձանագրել Վրաստանը՝ 61-րդ դիրքից բարձրանալով 38, իսկ Հայաստանի պարագայում (նաև՝ Մոլդովայի, Ղրղզստանի), թեև նրա վարկանիշը նշված ժամանակահատվածում կրկին դրական միտում է ունեցել, սակայն ոչ կտրուկ տարբերությամբ. եթե 2006թ. դրությամբ Հայաստանը զբաղեցնում էր 44-րդ տեղը, ապա 2008թ.՝ 41-րդը: 2006թ. համեմատությամբ 2008թ. վարկանիշներում ԱՊՀ երկրներից բացասական միտում են արձանագրել մասնավորապես Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսն ու Ադրբեջանը, իսկ Կենտրոնական Ասիայի երկրներից՝ Ղազախստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանն ու Ուզբեկստանը:

Բացի նշված երկրների ամփոփ ցուցանիշները ներկայացնելուց, հարկ ենք համարում անդրադառնալ նաև մասնակի՝ թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տրանսֆորմացիայի արդյունքներին՝ ըստ առանձնացված երկրների վարկանիշների համադրության: Այսպես, 2008թ. դրությամբ ԱՊՀ երկրների շարքում տնտեսական տրանսֆորմացիայի ցուցիչով բարձրագույն վարկանիշային արդյունքն արձանագրվել է Հայաստանի ու Ղազախստանի պարագայում, որոնց վարկանիշները կազմել են հավասար՝ 6,82-ական միավոր: Վերջիններիս ԱՊՀ պետությունների շարքից հաջորդում են Ռուսաստանը (6,54), Ուկրաինան (6,50) և Վրաստանը (6,36): Այս ցուցի արդյունքներով՝ ԱՊՀ երկրներին գերազանցում է Թուրքիայի վարկանիշային արդյունքը՝ 7,29 միավոր:

Ինչ վերաբերում է մյուս՝ քաղաքական տրանսֆորմացիայի ցուցչի արդյունքներին, ապա նշենք, որ ԱՊՀ երկրների ցուցակում այս ցուցչի բարձրագույն արդյունքը Ուկրաինայինն է (7,35 միավոր), որին հաջորդում են Վրաստանն ու Մոլդովան՝ 6,85-ական միավոր, ինչպես նաև Հայաստանը (6,00): Նկատենք, որ 2008թ. Ուկրաինայի ու Վրաստանի առավելությունը Հայաստանի ամփոփ ցուցանիշների նկատմամբ հիմնականում պայմանավորված է քաղաքական տրանսֆորմացիայի ցուցչով նրանց արձանագրած բարձր, իսկ Հայաստանի դեպքում՝ ցածր արդյունքներով:

Աղյուսակ 3


*FSI 2008թ., «Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը»
ինդեքս (Status index), առանձնացված երկրներ*

2006թ. դիրքը	2008թ. դիրքը	Երկիրը	տնտեսական տրանսֆորմացիայի ցուցիչը	քաղաքական տրանսֆորմացիայի ցուցիչը	Ամփոփ ցուցիչ
3	1	Չեխիա	9,57	9,55	9,55
1	2	Սլովենիա	9,29	9,70	9,49
2	3	Էստոնիա	9,29	9,55	9,42
4	4	Թայվան	9,21	9,45	9,33
5	5	Հունգարիա	9,00	9,35	9,18
7	6	Լիտվա	8,96	9,35	9,16
6	7	Սլովակիա	9,07	9,20	9,14
9	11	Լեհաստան	8,71	8,80	8,76
14	13	Լատվիա	8,50	8,70	8,60
16	15	Բուլղարիա	8,18	8,70	8,44
19	17	Ռումինիա	8,07	8,55	8,31
33	31	Սերբիա	6,64	7,75	7,20
34	32	Թուրքիա	7,29	7,05	7,17
32	35	Ուկրաինա	6,50	7,35	6,93
61	38	Վրաստան	6,36	6,85	6,60
44	41	Հայաստան	6,82	6,00	6,41
47	59	Ռուսաստան	6,54	5,35	5,94
75	60	Մոլդովա	5,00	6,85	5,93
78	63	Ղրղզստան	5,64	5,95	5,80
66	68	Ղազախստան	6,82	4,23	5,53
85	85	Չինաստան	6,26	3,15	4,70
82	87	Ադրբեջան	5,21	3,80	4,51
83	89	Բելառուս	5,00	3,93	4,47
95	101	Իրան	4,18	3,73	3,96
102	106	Տաջիկստան	3,86	3,73	3,80
103	111	Ուզբեկստան	4,14	3,22	3,68
109	115	Թուրքմենս.	3,89	2,78	3,34
116	122	Հյուս. Կորեա	2,21	2,70	2,46

Աղբյուրը՝ <http://www.bertelsmann-transformation-index.de/37.0.html?&L=1>

Գրաֆիկ 1

«Քաղաքական և տնտեսական տրանսֆորմացիաների կարգավիճակը» (Status index) ինդեքսում Հայաստանի դիրքը այլ երկրների շարքում



բ. «Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարումը» ինդեքս (Management index)

Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսի մյուս ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարման ցուցչի ըստ երկրների վարկանիշների սահմանման մեթոդաբանությունը հիմնվել է 4 չափորոշիչների վրա, որոնց միջինացված ցուցանիշը տալիս է տվյալ պետության ամփոփ վարկանիշը: Ինչպես և նախորդ ինդեքսի պարագայում, այստեղ նույնպես երկրները դասակարգված են վարկանիշային աստիճանակարգերում, որոնք ներկայացված են ստորև տրված աղյուսակում:

Աղյուսակ 4

Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարման չափորոշիչները, 2008թ.

Կառավարման պոտենցիալ
Ռեսուրսների արդյունավետություն
Կոնսենսուսի կառուցվածքը/consensus-building
Միջազգային համագործակցություն

Աղյուսակ 5

Ընդգրկված երկրների վարկանիշային աստիճանակարգումը, փակագծերում նշվում է 2008թ. երկրի զբաղեցրած դիրքը

Վարկանիշային աստիճանակարգում	Թվային սանդղակ
Լավագույն ցուցանիշ	7,52-7,23 (1-4)
Հաջողակ	7,20-6,23 (5-27)
Թույլ հաջողակ	6,20-4,92 (28-62)
Միջին	4,89-3,83 (63-99)
Թույլ	3,82-2,47 (100-116)
Չախողված	2,24-1,04 (117-125)

«Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարում» ինդեքսում Հայաստանի վարկանիշային ցուցանիշը կրկին բարձր դիրքում է: ԱՊՀ երկրների շարքում լավագույն արդյունքը գրանցվել է մասնավորապես Վրաստանի (6,36 միավոր) պարագայում: Ի դեպ, ԱՊՀ անդամ երկրների շարքում Վրաստանը միակ պետությունն է, որն ընդգրկվել է երկրորդ՝ *հաջողակ* աստիճանակարգման երկրների խմբում՝ իր ցուցանիշով համադրվելով Ռումինիայի, Հունգարիայի արդյունքների հետ (տե՛ս *Աղյուսակ 6*): Վրաստանին հաջորդում են Ուկրաինան (5,21 միավոր) և Հայաստանը (5,14), որոնք երկուսն էլ գտնվում են երրորդ՝ *թույլ հաջողակ* երկրների վարկանիշային աստիճանակարգում: Այս աստիճանակարգում է գտնվում նաև Լեհաստանը, որը 5,27 միավորով գերազանցում է թե՛ Ուկրաինային և թե՛ Հայաստանին: Հաջորդ՝ *միջին* աստիճանակարգման խմբում են գտնվում նաև ԱՊՀ մնացյալ հանրապետությունները՝ Ղազախստանը, Մոլդովան, Ռուսաստանն ու Ադրբեջանը. բացառություն է կազմում Բելառուսը, որը, ունենալով ԱՊՀ երկրների շարքում ցածրագույն ցուցանիշը, ընդգրկվել է նախավերջին՝ *թույլ* երկրների ցուցակում:

ԱՊՀ երկրների շարքում 2006թ. համադրությամբ իրենց արդյունքները բարելավել են Վրաստանը, Ուկրաինան, Ղազախստանը, Ղրղզստանն ու Մոլդովան: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ԱՊՀ երկրների շարքում վերջինս միակ երկիրն է, որ սույն վարկանիշային ցուցչով 2008թ. պահպանել է 2006թ. դիրքը:

Անդրադառնանք նաև առանձնացված երկրների ենթացուցիչների արդյունքների համադրությանը: Վրաստանի վարկանիշային ենթացուցիչներից բարձր ցուցանիշով առանձնացել են չորրորդ՝ միջազգային համագործակցության և առաջին՝ կառավարման պոտենցիալի ենթացուցիչները: Ինչ վերաբերում է Հայաստանին և Ուկրաինային, ապա վերջիններիս ենթացուցիչներից բարձրագույն ցուցանիշները գրանցվել են միևնույն՝ միջազգային համագործակցության ոլորտում: Ի դեպ, չորրորդ՝ միջազգային համագործակցության

ուրորդ նույնպես բարձրագույն ցուցանիշն է համարվում Ադրբեջանի ենթացուցիչների շարքում: Հայաստանի ցածրագույն ենթացուցիչը արձանագրվել է երկրորդ ռեսուրսների արդյունավետության կառավարման ասպարեզում:

Աղյուսակ 6


Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարումը, առանձնացված երկրներ

2006թ.-ի դիրքը	2008թ.-ի դիրքը	Երկիրը	1. Կառավարման պրոնեցիվ	2. Անտոնիանի պրոնեցիվ	3. Գուննեստանի կառավարումը	4. Միջազգ. համագործակց.	(1-4) Չափորոշիչների միջին հաշվարկ	Բարդության մակարդակը	Մակնի ցուցիչ
2	1	Չիլի	9,0	8,7	9,0	9,7	9,8	2,3	7,52
7	2	Էստոնիա	9,0	8,7	8,6	9,7	8,98	2,2	7,43
6	5	Սլովակիա	8,7	8,0	8,6	10,0	8,82	1,7	7,20
5	7	Թայվան	8,0	8,0	8,6	9,3	8,48	2,4	7,04
16	10	Լատվիա	8,7	7,0	8,2	9,3	8,30	2,2	6,86
21	13	Բուլղարիա	7,7	7,0	8,2	9,0	7,97	3,0	6,73
9	15	Լիտվա	8,0	7,0	9,0	9,0	8,25	1,5	6,70
15	18	Հունգարիա	8,3	7,3	8,0	9,3	8,25	1,4	6,67
24	22	Ռումինիա	7,7	6,3	7,8	8,7	7,62	3,4	6,49
35	23	Վրաստան	7,3	7,0	6,2	7,7	7,05	5,6	6,36
20	24	Թուրքիա	8,0	6,3	6,8	8,0	7,28	4,1	6,33
23	53	Լեհաստան	6,0	6,0	6,8	7,0	6,45	1,8	5,27
65	55	Ուկրաինա	6,3	4,3	6,0	7,3	6,00	4,0	5,21
56	56	Հայաստան	6,0	5,0	5,6	7,0	5,90	4,2	5,14
70	67	Չինաստան	5,3	5,0	4,8	6,7	5,45	5,6	4,92
82	76	Ղազախս.	5,0	4,7	4,8	7,0	5,37	4,3	4,69
80	77	Ղրղզստան	4,3	3,3	5,8	7,3	5,20	5,4	4,67
95	87	Մոլդովա	4,0	4,0	5,4	6,3	4,93	5,8	4,48
70	88	Տաջիկստան	4,0	4,0	4,0	7,3	4,83	6,5	4,46
87	98	Ռուսաստան	4,0	4,7	4,6	4,3	4,40	4,3	3,84
95	99	Ադրբեջան	3,7	4,0	3,8	5,7	4,28	5,3	3,83
107	110	Բելառուս	2,3	4,7	2,8	3,3	3,28	4,5	2,89
101	112	Իրան	3,3	3,7	3,0	2,3	3,08	5,9	2,80
112	117	Ուզբեկստան	2,3	2,7	2,2	2,7	2,47	5,9	2,24
116	121	Թուրքմենս.	2,3	2,0	1,6	3,0	2,23	5,3	2,00
115	122	Հյուս. Կորեա	2,7	2,7	1,5	1,3	2,04	6,8	1,90

Աղբյուրը՝ <http://www.bertelsmann-transformation-index.de/33.0.html?&L=1>

Գրաֆիկ 2

«Ժողովրդավարության և շուկայական տնտեսության քաղաքական կառավարում» (Management index), Հայաստանի դիրքը



**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Արաքս Փաշայան

1990-ականների սկզբներից հայ-ադրբեջանական հակամարտության միջազգայնացումը խնդիրը դարձրեց նաև «իսլամական օրակարգի» բաղկացուցիչը: Ադրբեջանը միջազգային, այդ թվում՝ իսլամական շրջանակներում ձեռնամուխ եղավ ակտիվ քարոզչության՝ փորձելով իսլամական համերաշխության գաղափարը և միջազգային իսլամական ռեսուրսն օգտագործել Ղարաբաղյան հարցում իսլամական պետությունների, մասնավորապես՝ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) աջակցությունը ձեռք բերելու համար:

Մասնավորապես՝ Թուրքիայի գործուն միջամտությամբ հայ-ադրբեջանական հակամարտության թեման 1992-ից՝ Ստամբուլի կոնֆերանսից ի վեր, ամրագրվեց իսլամական աշխարհի քաղաքական մարմնի օրակարգում, իսկ Ադրբեջանն անդամակցեց միջազգային իսլամական կրոնաքաղաքական այդ կառույցին:

***Իսլամական պաշտոնական դիրքորոշումը հայ-ադրբեջանական
հակամարտության վերաբերյալ***

Իսլամական պաշտոնական դիրքորոշումն առաջին հերթին արտահայտվում է Իսլամական կոնֆերանսի միջոցով, որը 1993թ. մինչ օրս պարբերաբար անդրադարձել է հայ-ադրբեջանական հակամարտությանը՝ Հայաստանը ներկայացնելով իբրև «զավթիչ», Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունեցող և Ադրբեջանի մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող երկիր՝ պահանջելով, որպեսզի Հայաստանի Հանրապետությունն առանց վերապահումների վերադարձնի Լեռնային Ղարաբաղը, «գրավյալ» շրջանները, իրականացնի խնդրի վերաբերյալ ՄԱԿ բանաձևերը:

Մեկ անգամ չէ, որ Իսլամական կոնֆերանսը կոչ է արել իսլամական պետություններին և միջազգային հանրությանը՝ «օգտագործել քաղաքական և տնտեսական ազդեցիկ միջոցներ՝ վերջ դնելու հայկական ագրեսիային և ադրբեջանական տարածքների բռնազավթմանը», զերծ մնալ Հայաստանին զինված ուժեր և սպառազինություններ կամ այդ նպատակով Հայաստանին տա-

րանցման տարածք տրամադրելուց, որպեսզի վերջինս հնարավորություն չունենա ընդլայնել հակամարտությունը, իսկ «գրավյալ» տարածքներում ադրբեջանցի ազգաբնակչության դեմ գործողությունները որակել է իբրև «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»:

Հատկանշական է, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը ինդրի կարգավորման ուղղությամբ որևէ ծրագիր առաջ չի քաշել կամ որևէ կառուցողական քայլ չի արել, չնայած կողմ է հակամարտությունը բանակցային ճանապարհով (ԵԱՀԿ շրջանակներում) կարգավորելու գաղափարին: Անհասկանալի է, թե ինչու հակամարտության խաղաղ կարգավորման պարագայում, որպես զիջումներ անող միակ կողմ, դիտարկվում է Հայաստանը, որն անհապաղ պետք է դուրս գա բոլոր «գրավյալ» տարածքներից: Ի դեպ, Լեռնային Ղարաբաղը երբևէ չի հիշատակվում որպես հակամարտող կողմ, իսկ նրա իշխանությունները, որ ձևավորվել են ընտրությունների արդյունքում, համարվում են «ոչ լեգիտիմ» և «հանցագործ»:

Խորամուխ չլինելով հարցի էության մեջ՝ անդամ երկրները քվեարկում են Ադրբեջանի և նրա համախոհ երկրների կազմած՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը շեշտող նախագծերի օգտին, հաշվի չառնելով, թե որքանով են դրանք նպաստում Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմանը:

ԻԿԿ Բաքվի կոնֆերանսը

Հատկանշական է, որ Ադրբեջանը, որպես կանոն, փորձում է իսլամական ֆորումները առավելագույնս օգտագործել սեփական քարոզչության և Ղարաբաղյան խնդրին հնչեղություն տալու համար: Անգամ 2006թ. սեպտեմբերին Բաքվում ԻԿԿ տուրիզմի նախարարների հանդիպման ժամանակ Ադրբեջանը որոշեց բարձրացնել հայ-ադրբեջանական հակամարտության հարցը:

Միայն վերջին մեկ-երկու ամիսների ընթացքում տեղի ունեցան ԻԿԿ երկու կարևոր հանդիպումներ, որտեղ հերթական անգամ հայ-ադրբեջանական թեման դարձավ քննարկման առարկա: Դրանք, ճիշտ է, նոր բան չավելացրին Հայաստանի նկատմամբ որդեգրված նախկին դիրքորոշման մեջ, սակայն ի հայտ բերեցին առկա իրողությունները՝ այն, որ Ադրբեջանը շարունակում է ակնկալել իսլամական աշխարհի աջակցությունը, որի խոստուն դրսևորումներից մեկը ՄԱԿ-ում Ադրբեջանի օգտին իսլամական պետությունների քվեարկություններն են:

ԻԿԿ հանդիպումներից մեկը Բաքվում ապրիլի 21-22-ին տեղի ունեցած իսլամական պետությունների իրավապահ մարմինների ղեկավարների կոնֆերանսն էր, որտեղ ընդունվեցին Բաքվի հռչակագիրը և այլ փաստաթղթեր: Կոնֆերանսը նվիրված էր վերագրային կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարին:

Հատկանշական է, որ հանդիպմանը, խոսելով միջազգային բնույթի տարբեր հանցագործությունների և ահաբեկչության մասին, Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը փորձեց միջազգային հանրությանը ցույց տալ, որ իր երկիրը որքան ժամանակ է «տառապում է հարևան Հայաստանի ագրեսիայից, որը գրավյալ ադրբեջանական տարածքներում ստեղծել է չվերահսկվող տարածքներ, որտեղ ծաղկում են թմրաբիզնեսը, ապօրինի զենքի վաճառքը, փողերի լվացումը»։ Ադրբեջանի նախագահը ձգտում էր համոզիչ կերպով ի ցույց դնել, որ «այդ շրջաններում կատարվող հանցագործությունները սպառնալիք են ոչ միայն Ադրբեջանի, այլև ողջ տարածաշրջանի համար»¹՝ այդօրինակ ձևով հիմնավորելով իսլամական պետությունների համագործակցության անհրաժեշտությունը ոչ միայն տարածաշրջանային, այլև աշխարհի մակարդակով։

Բարձրի հանդիպման արդյունքների ամփոփմանը նվիրված մամուլի ասուլիսում ԻԿԿ գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Իզգեթ Քամալ Մուֆթին նշեց, որ եթե լինեն ԻԿԿ անդամ պետություններ, ովքեր ընդառաջ չգնան պաշտոնական Երևանի հետ չհամագործակցելու կազմակերպության որոշմանը, ապա կազմակերպությունը ճնշում կգործադրի այդ երկրների վրա²։ Նման դիտարկումն, իհարկե, այնքան էլ իրատեսական չէ, եթե հաշվի առնենք, որ ԻԿԿ մի շարք հանդիպումներից հետո Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաներն անհիմն ձևով հայտարարել են, որ իսլամական պետություններն այլևս դադարեցնելու են Հայաստանի հետ իրենց շփումները։

ԻԿԿ Դամասկոսի կոնֆերանսը

ԻԿԿ հաջորդ հանդիպումը վերաբերում է արտաքին գործերի նախարարների 36-րդ կոնֆերանսին, որը տեղի ունեցավ մայիսի 23-25-ը, Դամասկոսում, ուր ընդունվեց 24 կետից կազմված «Հայաստանի Հանրապետության ագրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ» բանաձևը³, ինչը կրկնում էր ԻԿԿ նախորդ որոշումները՝ շեշտադրելով խնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանի ոչ կառուցողական դիրքորոշումը։ Սակայն հյուրընկալող երկրի նախագահ Բաշար Ալ-Ասադն իր ելույթում իսլամական աշխարհի առաջ ծառայած խնդիրների մասին խոսելիս հայ-ադրբեջանական հակամարտության թե-

¹ Глава Азербайджана выступает за координацию странами ОИК борьбы с оргпреступностью, <http://www.interfax-religion.ru/?act=news&div=29889>

² ОИК призвала исламские страны не сотрудничать с захватнической Арменией, <http://news-ru-trend.az/karabakh/1459528.html>; Conference of OIC Heads of Law Enforcement Agencies wraps up; adopts Baku Declaration, http://www.oic-oci.org/topic_detail.asp?t_id=2182

³ RESOLUTION NO.9/36-POL ON THE AGGRESSION OF THE REPUBLIC OF ARMENIA AGAINST THE REPUBLIC OF AZERBAIJAN, The Thirty-Sixth Session of the Council of Foreign Ministers (Session of Enhancing Islamic Solidarity), held in Damascus, Syrian Arab Republic from 28 Jamadul Awal – 1 Jamadul Thani 1430 H (23-25 May 2009).

մային չանդրադարձավ: Այս խնդրին չանդրադարձավ նաև թուրքական ծագմամբ ԻԿԿ գլխավոր քարտուղար Էքմեխլուդին Բիսանոլուն, ով աջակցում է ադրբեջանական քարոզչությանը:

Ի դեպ, մեկ անգամ չէ, որ իսլամական աշխարհի առաջնորդները շրջանցում են Ղարաբաղյան խնդիրը, ինչը փաստում է, որ «ադրբեջանական գրավյալ տարածքների» հարցն իսլամական աշխարհում այնքան էլ հնչեղություն չունի:

Եզրակացություններ

Իսլամական այլ պետությունների համեմատ՝ Ադրբեջանի համագործակցությունն ԻԿԿ-ի հետ բացառիկ լայն ընդգրկում ունի: Գրեթե ամեն տարի Բաքվում տեղի են ունենում ԻԿԿ տարբեր ձևաչափի հանդիպումներ: Նման ակտիվություն կազմակերպությունում ցուցաբերում են բացառիկ պետություններ: Պատահական չէ, որ Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը, որպես կանոն, ընդգծում է ԻԿԿ աջակցությունն Ադրբեջանին, ինչը, ըստ նրա, կօգնի միջազգային ասպարեզում իր երկրին հուզող հարցերն առաջ քաշելու համար: Բացի այդ, աստիճանաբար Ադրբեջանն իր համար նպաստավոր դիրքեր է ստեղծում նաև արաբական աշխարհում: Ակնհայտ է, որ Ադրբեջանի հեղինակությունն իսլամական աշխարհում զգալիորեն աճել է, իսկ միջազգային իսլամական գործոնը հայ-ադրբեջանական հակամարտության հարցում շարունակում է բացասական ներազդեցություն ունենալ, ինչն առաջին հերթին արտահայտվում է համաիսլամական պաշտոնական դիրքորոշման փաստով, ՄԱԿ-ում Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությանն առնչվող բանաձևերին հօգուտ Ադրբեջանի քվեարկելու հանգամանքով, ԻԿԿ կողմից Ադրբեջանին տրամադրվող նյութական և բարոյական աջակցությամբ:

Հայաստանի արտաքին քաղաքականության ջանքերն այսուհետև նույնպես պետք է ուղղված լինեն իսլամական աշխարհում ադրբեջանական քարոզչության հակազդեցությանը՝ իսլամական շրջանակներում ամրագրելով այն միտքը, որ արաբական իսլամական աշխարհի համար կարևոր նշանակություն ունեցող Պաղեստինյան խնդրի և Ղարաբաղյան հարցի միջև շատ եզրեր կան:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

(ԵՄ առջև ստանձնած պարտավորությունների համատեքստում)

Լևոն Հովսեփյան

Թուրքիայի ներքաղաքական գործընթացների, բանակ-քաղաքացիական իշխանություն հարաբերությունների և Եվրամիությանն այդ երկրի անդամակցության շրջանակներում ընթացող բարեփոխումների տեսանկյունից խիստ կարևորվում են հատկապես երկրի զինվորական ու անվտանգության ոլորտին առնչվող բարեփոխումները, որոնք նպատակ ունեն սահմանափակել զինվորականության դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում և հաստատել ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմներ անվտանգության ոլորտի նկատմամբ: ԵՄ առջև Թուրքիայի ստանձնած պարտավորությունների շրջանակում մասամբ իրականացվել և իրականացվում են բարեփոխումներ՝ բանակ-քաղաքականություն հարաբերությունները եվրոպական չափորոշիչներին հարմարեցնելու և անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու ուղղությամբ:

Առաջին էական քայլը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (ԹԱԱԽ) հետ կապված բարեփոխումների գործընթացն էր¹:

2003թ. հուլիսին Թուրքիայի Ազգային մեծ ժողովն (ԹԱՄԺ) ընդունեց Եվրամիության անդամակցության ճանապարհին նախապայման համարվող այսպես կոչված «բարեփոխումների 7-րդ փաթեթը» որը ԹԱԱԽ բարեփոխումների միջոցով պետք է սահմանափակեր զինվորականության դերը երկրի քաղաքական կյանքում, ինչն էլ որոշ հեղինակների թույլ տվեց դա բնորոշել որպես «թավշյա հեղափոխություն»²:

¹ Մանրամասն տե՛ս *Լ.Հովսեփյան*, Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդն արդի բարեփոխումների համատեքստում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, N 4, Ռ.Սաֆրաստյանի խմբ., Երևան 2006, էջ 114-123:

² Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın -2006, <http://www.tesev.org.tr>, s. 32.

Թուրքիայի անվտանգության համակարգի ժողովրդավարացման առումով կարևոր ազդակ հանդիսացավ 1999թ. Հելսինկյան գագաթաժողովը¹, ինչին հաջորդեցին որոշ բարեփոխումներ այդ ոլորտում: Առաջին հիմնական փոփոխությունը կատարվեց Սահմանադրության 118-րդ հոդվածում, որով ԹԱԱԽ-ը դարձավ սահմանադրական հաստատություն: 2001թ. հոկտեմբերին կատարված այդ փոփոխություններով խորհրդի անդամների մեծ մասը ներկայացնում է կառավարության, այլ ոչ թե զինվորականության հատվածը: Խորհրդի ներկայացրած որոշումները կրում են խորհրդատվական բնույթ և նախկինի նման չեն ենթադրում դրանք նախարարների խորհուրդ վերցնել «առաջնահերթ քննարկման»²:

Առաջին քայլը 2003թ. օգոստոսին Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով ԹԱԱԽ ու գլխավոր քարտուղարության մասին օրենքում կատարված փոփոխություններն էին, որոնցով զգալիորեն նվազեցվեցին ԹԱԱԽ լիազորություններն ու ազդեցության շրջանակները: Զինվորական գերակշռությամբ գործադիր իշխանություն իրականացնող այդ մարմինը ստացավ ավելի շատ խորհրդակցական կառույցի բնույթ, որը պետք է խորհրդատվական որոշումներով օժանդակություն ցույց տա նախարարների խորհրդին ու վարչապետին: Ինչպես նշել է ԹԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնն ստանձնած առաջին քաղաքացիական պաշտոնյան՝ կադրային դիվանագետ Յիդիթ Ալփոդանն իր ասուլիսում, «խորհրդի գործառույթները հանձնվել են, և այժմ այն ոչ թե գործադիր, այլ խորհրդակցական մարմին է»³:

Անվտանգության խորհրդի հետ կապված բարեփոխումները, օրենսդրական ու կառուցվածքային փոփոխություններն այն դարձրին ավելի շատ քաղաքացիական, խորհրդատվական մարմին՝ օժանդակելու կառավարության գործունեությանը:

Որոշ բարեփոխումներ են իրականացվել նաև զինված ուժերի բյուջեի ու ռազմական ծախսերի խորհրդարանական վերահսկողության ուղղությամբ: Մասնավորապես՝ 2003թ. ընդունվեց «Պետական ֆինանսների կառավարման

¹ 1999թ. դեկտեմբերին ԵՄ պետությունների ու կառավարությունների ղեկավարների գագաթաժողովում որոշում կայացվեց ԵՄ ընդլայնման վերաբերյալ: Թուրքիան պաշտոնապես ստացավ ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ՝ ստանձնելով հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտներում ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու պարտավորություններ: Մանրամասն տե՛ս Dr. *Sanem Baykal*, Turkey-EU Relations in the Aftermath of the Helsinki summit: An Analysis of Copenhagen Political Criteria in Light of the Accession Partnership, National program and the Regular Reports, Ankara Review of European Studies, vol.2, No3, 2002, p. 15-63.

² Türkiye Cumhuriyeti Anayasası, Yasa Kitapları Dizisi:1, İstanbul, 2003, s. 78.

³ Turkey puts civilian over its National Security Council, reduce role, <http://www.worldtribune.com>, Dec. 3, 2004.

ու վերահսկողության մասին» օրենքը, ինչը ենթադրում է ՊՆ բյուջեի և այլ ոչ բյուջետային պաշտպանական հիմնադրամների խորհրդարանական վերահսկողությունը: 2004թ. այդ գործընթացը կարգավորելու նպատակով իրականացվեց Սահմանադրության 160-րդ հոդվածի փոփոխությունը, ինչն օրինականացրեց ԹԱՄԺ վերահսկողական գործառույթներն այդ ոլորտում¹:

Ներկայումս Թուրքիան պատրաստվում է կառուցվածքային ու կադրային բարեփոխումներ իրականացնել Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության² շրջանակներում, ինչը մի կողմից կբարձրացնի նրա արդյունավետությունը և կնպաստի Թուրքիայի եվրաինտեգրման ջանքերին: Այդ նախագիծը ենթադրում է մինչև 2014թ. «քաղաքացիականացնել» այն՝ ղեկավարումը ՋՈւ գլխավոր շտաբից փոխանցել Ներքին գործերի նախարարությանը: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության Ազգային ծրագրի պարտավորությունների շարքում նախատեսվում է ներքին անվտանգության գործառույթները հիմնականում դնել քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ու լիազորությունների շրջանակում³: Չնայած Ժանդարմերիայի հրամանատարությունը հանձնվում է ՆԳՆ-ին, պատերազմի ժամանակ այն միանգամից անցնում է ՋՈւ գլխավոր շտաբի ենթակայության տակ:

Ժանդարմերիայի ոլորտում իրականացվելիք բարեփոխումների գործընթացը մեկնարկել էր դեռևս 2004թ., երբ թուրքական կողմը եվրոպական պարտավորությունների շրջանակում պետք է քայլեր ձեռնարկեր պարտադիր

¹ Almanak Türkiye 2005, նշվ. Աշխ., էջ 53-54:

² Ժանդարմերիան ստեղծվել է 19-րդ դարի առաջին կեսին՝ Օսմանյան Թանգիմաթի տարիներին՝ 1909թ. հանձնվելով Պատերազմի նախարարությանը: Այն հետագայում լուրջ դերակատարություն է ունեցել անկախության համար մղված պատերազմում: Հետագայում այն ստանձնեց *PKK-ի* դեմ պայքարի գործողությունների պատասխանատվությունը և լայն լիազորություններ ստացավ հատկապես երկրի արևելյան ու հարավարևելյան նահանգներում: Ներքին անվտանգության ապահովման պատասխանատվությունը տարածվում է Թուրքիայի տարածքի 92 տոկոսի վրա: Նրա հիմնական լիազորություններն են՝ ահաբեկչության, մաքսանենգության դեմ պայքար, սահմանային անցակետերի պահպանություն, պարտադիր զորահավաքի հարկադրում, քրեական հետախուզություն, ինչպես նաև ՋՈւ կողմից առաջ քաշված այլ հանձնարարություններ: Ժանդարմերիայի հրամանատարությունը կազմված է 6 առանձին ճյուղերից, որոնք գործում են 13 շրջանային հրամանատարությունների կազմում: Ժանդարմերիայի կազմում գործում են բավական լավ մարզված ու հատուկ միջոցներով զինված Ահաբեկչության դեմ պայքարի հատուկ խումբը (*OJKB*) և Ժանդարմերիայի հետախուզության ու հակահաբեկչական կազմակերպությունը (*JITEM*): Տե՛ս Turkey's Gendarmerie: Reforming a Frontline Unit in the War on Terrorism, <http://www.jamestown.org>, November 25, 2008: Հատկապես վերջերս, ըստ թուրքական աղբյուրների, Էրզենեքոն խմբավորման հետ կապված հետաքննության արդյունքում բացահայտվում են տարբեր ապօրինի գործողությունների, քաղաքական մահափորձերի ու առևանգումների փաստեր, որոնք իրականացվել են *JITEM*-ի կողմից: Տե՛ս *JITEM ölümlerinde 1000 kişinin ismi vardı*, Zaman, 14.04.2009.

³ Jandarma'da AB devrimi!, Radikal, 17.04.2009.

(Ժամկետային) զինծառայողների թվաքանակի կրճատման ու քաղաքացիական վերահսկողության հաստատման ուղղությամբ, որին պետք է աջակցեր Մեծ Բրիտանիան: Բացի այդ, նախատեսվում էր ստեղծել Սահմանային ոստիկանության ծառայություն, և որպեսզի ապահովվեր ցամաքային ու ծովային սահմանային անվտանգությունը, մշակվեց ԵՄ-ի և Թուրքիայի ՆԳՆ Միավորված սահմանային անվտանգության կառավարման ռազմավարությունը: Այդ ոլորտում, սակայն, գործնական քայլեր չիրականացվեցին, ինչը կապված էր բանակի կոշտ դիմադրության հետ¹:

Նշենք, որ Ժանդարմերիայի հրամանատարությունն այդ նախաձեռնության հետ կապված լուրջ դժգոհություն է հայտնել, քանի որ այն միշտ գտնվել է ՋՈւ գլխավոր շտաբի ենթակայության տակ և բանակի ռազմական ստորաբաժանում համարվել: Բացի այդ, գրեթե միշտ անհասկանալի դիմակայություն ու մրցակցություն է եղել ոստիկանության գործերի ու ժանդարմերիայի միջև՝ լիազորությունների հստակեցման խնդիրների հետ կապված: Հատկապես 2008թ. վերջին ահաբեկչության դեմ պայքարի նոր ռազմավարության քննարկումների ժամանակ զինվորականության ներկայացուցիչները պնդում էին այդ պայքարում առաջնային դերակատարությունը ժանդարմերիայի հրամանատարությանը հանձնելու անհրաժեշտության մասին, սակայն կառավարությունը ձեռնամուխ եղավ նոր համակարգող մարմնի ստեղծմանը: Ըստ թուրքական աղբյուրների՝ Ժանդարմերիայի հրամանատարության տակ գտնվում է 280.000-ոց անձնակազմ, որից 4.500-ը՝ սպա, 18.000-ը՝ ենթասպա, 25.000-ը՝ մասնագետ-սերժանտ, 80.000-ը՝ շարքային զինվոր²:

ԹԱԱԽ ու Ահաբեկչության դեմ պայքարի բարձրագույն խորհրդի կողմից ընդունված որոշումների համաձայն՝ Ժանդարմերիայի հրամանատարությունն արդեն գործելու է սահմանների անվտանգության ու գյուղական շրջաններում կարգուկանոնի հաստատման գործառույթների շրջանակում՝ վերացնելով նախկին պարտականությունները քաղաքներում: Հիմնական շեշտը դրվելու է քրդաբնակ շրջաններում անվտանգության ապահովման վրա:

Թուրքիայում ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարության բարեփոխումների շրջանակում հաստատվել է հակաահաբեկչական պայքարի նոր կառուցվածքային համակարգի ներդրման որոշումը, որն արժանացել է ԹԱՄԺ հաստատմանը: Այդ երկրի ՆԳՆ-ին կից ստեղծվելու է Անվտանգության քարտուղարություն, որի հիմնական գործառույթը լինելու է հակաահաբեկչական պայքարի համակարգումը՝ ապահովելով անվտանգության ուժերի ու հետախուզական մարմինների միջև օպերատիվ համագործակցությունը: Հատուկ ռազմավարական մշակումների և ուսումնասիրությունների արդյուն-

¹ Almanak Türkiye 2005, ss. 99-100.

² Նույն տեղում:

քում քարտուղարությունն անվտանգության ուժերին է ներկայացնելու հստակ գնահատականներ ու ուսումնասիրություններ՝ ապահովելով անհրաժեշտ ռազմավարական վերլուծություններով¹:

Այդ կառույցը հիմնականում գտնվելու է քաղաքացիական իշխանությունների վերահսկողության տակ՝ պատասխանատու լինելով վարչապետի առջև: Ի դեպ, այդ գերատեսչությանը չի վերապահվում օպերատիվ գործողությունների իրականացման լիազորությունը, այլ այն ուղղակի դիտվում է որպես խորհրդակցական մարմին: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում ստեղծված համանման կառույցներն ամբողջովին լիազորված են իրականացնել նաև օպերատիվ գործողություններ:

Անվտանգության քարտուղարության ղեկավարի պարտականությունն է լինելու անընդհատ, օպերատիվ հանդիպումներ անցկացնել ԶՈւ ԳՇ պետի, Ազգային հետախուզական կազմակերպության (*Milli Istihbarat Teşkilatı*)², ժանդարմերիայի ու անվտանգության մարմինների բարձրաստիճան ղեկավարների հետ, լսել նրանց կարծիքներն ու առաջարկությունները, համատեղ մշակել իրականացվելիք գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը:

Կառավարող Արդարություն և զարգացում կուսակցությունը պատրաստվում է մի շարք փոփոխություններ իրականացնել երկրի Սահմանադրության մեջ, որոնք մեծ մասամբ վերաբերում են քաղաքական համակարգին: Սահմանադրական փոփոխությունների փաթեթում նախատեսվում է ներառել Բարձրագույն ռազմական խորհրդին (*FÖİV - YAŞ*) վերաբերող հոդվածները և իրականացնել որոշ փոփոխություններ: Մասնավորապես՝ առաջարկվում է դատական վերահսկողություն սահմանել ԲՌԽ-ի կողմից ընդունված որոշումների նկատմամբ, ինչը հնարավորություն կտա վերանայել դրանք: Ներկայիս Սահմանադրության համաձայն՝ այդ մարմնի որոշումները քննարկման ենթակա չեն³:

2008թ. վերջին հրապարակվեց Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ Եվրահանձնաժողովի տարեկան զեկույցը, ինչն անդրադառնում է քաղաքա-

¹ *Teröre karşı Güvenlik Müsteşarlığı dönemi*, <http://www.cnnturk.com>, 05.02.2009; *Güvenlik Müsteşarlığı kuruluyor*, *Hurriyet* 05.02.2009.

² *MIT-ը* Թուրքիայի արտաքին հետախուզության հիմնական հանրապետական մարմինն է, որը ստեղծվել է 1965թ.՝ դեռևս 1926-ից գործող Ազգային անվտանգության ծառայության (*MEH*) հիմքի վրա: Այն ունի ինքնուրույն գերատեսչության կարգավիճակ՝ պատասխանատու լինելով երկրի վարչապետին:

³ Բարձրագույն ռազմական խորհուրդը գումարվում է տարին երկու անգամ, քննության առումով բանակում տիրող իրավիճակին ու կարգապահությանը վերաբերող հարցերը, որոշումներ ընդունում զինվորականների առաջխաղացման ու խրախուսման, ինչպես նաև բանակից հեռացումների ու այլ տույժերի վերաբերյալ: *Reform seeks to curtail YAŞ power*, <http://www.hurriyet.com.tr/english/home/>, 27.04.2009

կան, իրավական ու անվտանգության ոլորտներում ոչ լիարժեք բարեփոխումներին ու նաև դրանց բացակայության քննադատությանը¹: Եվրամիությանն այդ երկրի անդամակցության գործընթացում Թուրքիան երկրի տարբեր ոլորտներում օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելու պարտավորություններ է ստանձնել, այլ կերպ ասած՝ այդ երկրի պետական կառավարման, հասարակական-քաղաքական և օրենսդրական ոլորտները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու առումով:

Ինչպես նախորդ զեկույցներում, այստեղ ևս տարբեր բնագավառներում բարեփոխումների առաջընթաց չգրանցելու պատճառով խիստ քննադատական մոտեցում է ցուցաբերվում: Հատկապես բացթողումներն ու առաջընթացի բացակայությունն ակնհայտ են ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների, խոսքի ազատության ու դատական համակարգի բնագավառներում: Լուրջ խնդիր է դիտարկվում Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցության փակման համար բացված հայցը, որը, սակայն, ձախողվեց: Վերջերս նման խնդրի առջև էր կանգնած նաև քրդամետ միակ խորհրդարանական կուսակցությունը՝ Դեմոկրատական հասարակություն կուսակցությունը: Ի դեպ, Թուրքիայում կուսակցությունների փակման ավանդույթը խորապես արմատավորված է քաղաքական գործընթացներում. հանրապետական Թուրքիայում ավելի քան 2 տասնյակ կուսակցություններ փակվել են, իսկ գործունեությունը՝ կասեցվել²:

Բարեփոխումների իրականացման մեջ կարևորագույններից է համարվում երկրի սահմանադրության փոփոխության հարցը: 1980թ. ռազմական հեղաշրջման արդյունքում ի հայտ եկած սահմանադրությունն արտահայտում էր այդ իրադարձության տրամաբանական մոտեցումները: Չնայած վերջին մի քանի տարիներին, հատկապես անվտանգության ու քաղաքական գործընթացներում զինվորականության վերահսկողության ու ազդեցության նվազեցման վերաբերյալ մի շարք հողվածներում փոփոխություններ են կատարվել, այդուհանդերձ, այն լիովին չի համապատասխանում ԵՄ չափորոշիչներին:

Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության շրջանակներում ընթացող բարեփոխումների տեսանկյունից առավել «զգայուն» են ընթանում այդ երկրի զինվորական ու անվտանգության ոլորտին առնչվող փոփոխությունները, որոնք նպատակ ունեն սահմանափակել զինվորականության դերը հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում և հաստատել ժողովրդավարական վերահսկողություն անվտանգության ոլորտի նկատմամբ:

2008թ. զեկույցում լուրջ քննադատության է ենթարկվում անվտանգու-

¹ Turkey 2008 Progress Report, http://www.ec.europa.eu/enlargement/pdf/press_corner/key-documents/reports_nov_2008/turkey_progress_report_en.pdf

² Նույն տեղում:

թյան ոլորտում իշխանությունների կողմից ոչ լիարժեք ու վերջնական բարեփոխումների հարցը: Դեռևս խնդրահարույց է անվտանգության բնագավառի քաղաքացիական վերահսկողությունը: Թուրքիայի զինված ուժերը շարունակում են զգալի ազդեցություն ունենալ քաղաքական գործընթացներում, ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ մեխանիզմների գործադրմամբ: Բարձրաստիճան զինվորականները բացահայտորեն արտահայտում են իրենց դիրքորոշումներն արտաքին ու ներքին քաղաքականության հարցերում, ինչպես նաև աշխարհիկության, քաղաքական կուսակցությունների ու այլ ոլորտների հետ կապված, որոնք դուրս են իրենց իրավասությունների շրջանակից¹:

Դեռևս փոփոխություններ չեն կատարվել բանակին ու անվտանգության խորհրդին վերաբերող օրենքներում, որոնք պետք է համապատասխանեցվեն եվրոպական չափանիշներին: Գործող օրենքները զինված ուժերին հնարավորություն են տալիս տարբեր կերպ մանևրելու միջոցով լայն իրավասություններ ունենալ ազգային անվտանգության որոշման հարցերում: Առաջընթաց չի գրանցվել նաև Ժանդարմերիայի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանման առումով: Չնայած զեկույցը քննադատում է Ազգային անվտանգության խորհրդի օրենսդրական դաշտում բարեփոխումների բացակայությունը, այնուամենայնիվ, վերջին տարիներին, հատկապես ԱԶԿ իշխանության գալուց հետո, խորհրդի կառուցվածքային, կադրային առանձնահատկություններին ու գործունեության կարգին, պարտականությունների ու լիազորությունների շրջանակներին վերաբերող օրենսդրական փոփոխություններ ձեռնարկվեցին: Կատարված բարեփոխումներով հանդերձ՝ 2003թ. և 2004թ. Եվրահանձնաժողովի զեկույցներում ընդգծվում էր, որ «դեռևս երկրի զինվորականությունը պահպանում և գործադրում է իր ազդեցությունը տարբեր ոչ պաշտոնական մեխանիզմների միջոցով»²:

2008թ. զեկույցում նշվում է, որ մինչև հիմա գործում է 1997թ. գաղտնի արձանագրությունը «անվտանգության, հասարակական կարգի ու օժանդակության» մասին, ինչը հնարավորություն է տալիս որոշակի պայմաններում իրականացնել ռազմական գործողություններ ներքին անվտանգության նպատակով՝ առանց քաղաքական իշխանությունների պահանջի: 2005թ. Ներքին գործերի նախարարությունն այդ արձանագրության փոփոխության հետ կապված փաթեթ էր ներկայացրել ԶՈՒ ԳՇ պետին, ինչը, սակայն, մերժվել էր³:

¹ Նույն տեղում:

² 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, 2004 regular report on Turkey,s progress toward EU accession; Commission of the European Communities Brussels, 06.10.2004, p.23, www.foreigntrade.gov.tr; 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, <http://www.ec.europa.eu>

³ Turkey 2008 Progress Report, *նշվ. աշխ.*:

Առաջընթաց չի գրանցվել նաև ռազմական բյուջեի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը մեծացնելու ուղղությամբ: Մեջլիսի համապատասխան հանձնաժողովը վերանայում է միայն պաշտպանության նախարարության բյուջեն, մինչդեռ կան արտաբյուջետային մարմիններ, որոնք դուրս են մնում վերահսկողությունից: Խոսքը վերաբերում է Ռազմական արդյունաբերության աջակցման ֆոնդին, որի միջոցով էլ կատարվում են հիմնական ռազմատեխնիկական միջոցների ձեռքբերումները:

Ստահոգիչ են համարվում հասկապես զինվորականության կողմից երկրի մամուլի ու քաղաքացիական հասարակության հաստատությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու փորձերը: 2008թ. հունիսին թուրքական «*Taraf*» թերթը հրապարակեց Թուրքիայի գլխավոր շտաբի գաղտնի պլանի մասին հրապարակում, ըստ որի՝ գործողությունների փաթեթ էր մշակվել քաղաքականության ու հասարակական կյանքում զինվորականության նախաձեռնությունների վերաբերյալ: Պլանի նպատակը զինվորականության համար զգայուն մի շարք հիմնախնդիրների նկատմամբ հասարակական կարծիքի ուղղորդումն էր իրենց մոտեցումներին համապատասխան: Որոշ աղբյուրների համաձայն՝ նույնիսկ գլխավոր շտաբի կողմից «սև ցուցակ» էր կազմված, որի մեջ ընդգրկված հասարակական հայտնի գործիչները, այդ թվում նաև ներկայիս նախագահ Գյուլը, և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մեղադրվում էին «Թուրքիան մասնատել ցանկացող ԱՄՆ ու ԵՄ տարբեր ֆոնդերի կողմից ֆինանսավորվելու և այդ ծրագրերը երկրի ներսում գործադրելու մեջ»¹: Ի դեպ, վերջին տարիներին թուրքական հասարակական-քաղաքական, գիտական ու նաև զինվորական որոշ շրջանակներում խիստ ակտիվացել են Թուրքիայի մասնատմանը, քայքայմանն ու տրոհմանն ուղղված արտաքին ուժերի ծրագրերի ու մտադրությունների մասին քննարկումները: Այդ երևույթը կարելի է անվանել «սերաֆորիա» կամ «մասնատման սինդրոմ»: Այս առումով խիստ բնորոշ էր դեռ 2007թ. Թուրքիայի ԶՈՒ նախկին գլխավոր շտաբի պետ (1990-94թթ.) Դոդան Գյուրեշի այն հայտարարությունը, որ «Թուրքիան միշտ պետք է զգոն լինի, քանի որ Թուրքիայի համար միշտ առկա է մասնատման վտանգը, ինչը ցանկանում են թե՛ ԱՄՆ-ը, թե՛ ԵՄ-ը, որոնց համար նախընտրելի է Թուրքիայի փոքրացումը»²: Ըստ թուրքական ընկալումների՝ դա մի հաղթաթուղթ է Թուրքիայի դեմ արտաքին ուժերի կողմից, որոնք օգտագործվում են այդ երկրից տարբեր զիջումներ ստանալու համար: Այլ կերպ՝ Թուրքիայում տարածքների կորստի վախն ամենուր է:

¹ Genelkurmay'ın yeni kontrgerilla planı, Taraf, 02.06.2008; Genelkurmay'ın gizli planı՝ iddiası, <http://www.haber7.com>, 20.06.2008

² ABD-AB, Türkiye'nin bölünmesini istiyor, Milliyet, 04.11.2007; Doğan Güreş Paşa'dan şok iddia, <http://www.ensonhaber.com/gundem/90989/dogan-gures-pasadan-sok-iddia.html>

Փաստորեն, անվտանգության ու բանակ-քաղաքացիական իշխանություններ հարաբերությունների ոլորտում կատարված փոփոխություններն ու դրանց փոքրիշատե համապատասխանեցումը ԵՄ չափորոշիչներին իրականում չեն ապահովում քաղաքական գործընթացներում զինվորականության ազդեցության չեզոքացումը:

Յուրահատուկ երկվություն է ստեղծվում զինվորականություն-քաղաքացիական իշխանություններ արդի հարաբերություններում: Թուրքական զինվորականությունը հանդիսացել է քեմալականության գաղափարների կրողն ու պահապանը, իսկ քեմալականության գաղափարախոսության մեջ Թուրքիայի զարգացման տեսլականի վերաբերյալ Աթաթյուրքի հայացքներն ու սկզբունքներն են, ըստ որի՝ Թուրքիայի տեղն Արևմուտքում է՝ որպես արևմտյան տիպի աշխարհիկ պետություն: Այս պարագայում Թուրքիայի ԵՄ անդամակցությունը տեղավորվում է այդ համատեքստում: Ուստի, զինվորականությունը պարզ գիտակցել և գիտակցում է, որ ԵՄ անդամակցության ճանապարհին սահմանափակվելու են բանակի լիազորությունները: Սակայն, խնդիրն այն է, որ զինվորական վերնախավը խիստ կասկածամտությամբ է վերաբերվում ներկա իշխանություններին և չի փորձում լիովին հետ քաշվել քաղաքական դաշտից՝ հատկապես այն պարագայում, երբ երկրում զգալիորեն սրվում է քրդական խնդիրը, տարածաշրջանում ի հայտ են գալիս անկանխատեսելի նոր զարգացումներ, որոնք առնչվում են Թուրքիայի ազգային անվտանգությանը:

Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Իլքեր Բաշբուլն այս տարվա ապրիլին Ստամբուլի ռազմական ակադեմիայում հանդես եկավ ելույթով, որի ժամանակ հիմնական շեշտադրումները կատարեց բանակ-կառավարություն փոխհարաբերությունների, ահաբեկչության դեմ պայքարի հարցերի ու աշխարհիկության խնդիրների վրա՝ նշելով, որ «կառավարությունը պետք է հաշվի նստի բանակի կողմից ներկայացվող խորհուրդների հետ, հակառակ պարագայում քաղաքական գործիչները պատասխանատվություն են կրելու այդ խորհուրդները հաշվի չառնելու արդյունքում գրանցած անհաջողությունների համար»¹:

Թուրք բարձրաստիճան զինվորականը մեկ անգամ ևս հասկանալ է տալիս, որ բանակի բարձրագույն հրամանատարությունը հետևում է ներքաղաքական զարգացումներին, և կառավարությունը պետք է հաշվի առնի այդ հանգամանքը: Չնայած անվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումներին, դրանք լիովին չեն ապահովում անվտանգության մարմինների և ՋՈՒ նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները, ու զինվորականությունը դեռևս պահպանում է դերակատարությունն ու միջամտությունը հասարակական-քաղաքական կյանքում:

¹ Başbuğ'dan çok kritik açıklamalar, <http://www.haber3.com>, 14.04.2009

ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՎԾՈՎՅԱՆ-ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Մերզեյ Մարզայան

Արդի աշխարհում էներգետիկ զենքը չափից ավելի արդյունավետ է այն բանի համար, որպեսզի դրա կիրառումն իրենց անտեսել թույլ տան ոչ միայն էներգակիրների խոշոր արտահանողներն ու սպառողները, այլ նաև տարանցող երկրներն ու նրանց հարևան պետությունները:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամն այդ «զենքով խաղացողներին» հարկադրեց փոքր-ինչ վերանայել քաղաքական և, ըստ էության, տնտեսական քաղաքականության հարաբերակցությունը նավթի և գազի արտահանման գործող նախագծերի զարգացման և հեռանկարային նախագծերը լոբբինգի ենթարկելու գործում, և համաշխարհային ճգնաժամի հաղթահարումից հետո պահանջված կմնան առաջին հերթին միայն այն նախագծերը, որոնք առավել կարևոր աշխարհատնտեսական կամ աշխարհաքաղաքական նշանակություն կունենան:

Այս համատեքստում ամենանկատելի տեղերից մեկը տարածաշրջանային, արտատարածաշրջանային և գլոբալ դերակատարների պլաններում զբաղեցնում է Կասպյան-կենտրոնաասիական տարածաշրջանը:

Որքանով է հիմնական դերակատարների համար կրիտիկական իրենց էներգետիկ պաշարները համաշխարհային շուկա հանելու, և որ գլխավորն է դրանց ծավալների ու տեղափոխման երթուղիների վերաբերյալ նախագծերի հաջողության կամ ձախողման հեռանկարը. սրանից է կախված այն, թե արդյոք տարածաշրջանի երկրները՝ և՛ արտադրողները, և՛ տարանցողները, և՛ պարզապես հարևանները, կկարողանան իրենց տնտեսական կամ «աշխարհագրական» պոտենցիալը փոխարկել քաղաքականի:

Հայաստանի և Ադրբեջանի շարունակվող ռազմաքաղաքական դիմակայության պայմաններում խիստ կարևոր է որոշել, թե ինչպիսին է տարածաշրջանի երկրների իրական նշանակությունը և դրանցից յուրաքանչյուրի դերը նոր «Մեծ էներգետիկական խաղում», ինչպիսին են դրա բոլոր մասնակիցների ռազմավարական նպատակներն ու մարտավարական խնդիրները, ընդ որում՝ ոչ միայն և ոչ այնքան դրա հենց էներգետիկական կտրվածքով:

Ինչպես և յուրաքանչյուր խաղում, կարևոր է որոշել, թե դրա որ քայլերն են հանդիսանում նոր երկարատև զարգացումների նախանշանները, և որոնք են, որ ընդամենը սովորական սակարկության գործընթացի տարրեր են: Սրանից է կախված

սեփական պատասխան գործողությունների մարտավարության ճիշտ որոշումը, իսկ վերջնարդյունքում՝ ռազմավարական շահերի իրականացման հնարավորությունը:

Այսպես, Հարավկովկասյան տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի զարգացման հեռանկարները ներկա պահին կախված են իրական այն նպատակների ու կոնկրետ խնդիրների որոշման ճշմարտացիությունից, որոնք «ընկած» են Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների Բաքվի բանակցությունների հետևում, իրենց շահերը տնտեսական հարթություն տեղափոխելու կողմերի հնարավորությունից և ունակությունից, ինչպես նաև նրանից, թե որքանով իրական ու արդյունավետ կլինի նրանց կողմից իրենց «էներգետիկ զինանոցի» կիրառումը Կասպիցի և Կենտրոնական Ասիայի նավթի ու գազի պաշարների շուրջ ընդհանուր աշխարհաքաղաքական իրավիճակի զարգացման պայմաններում:

Կասպյան-կենտրոնասիական տարածաշրջանի հանդեպ մեծ ուշադրությունը՝ գազի առկայության, արդյունահանման հնարավորությունների և դեպի համաշխարհային շուկաներ տեղափոխելու տարբերակների առումով, պայմանավորված է հետևյալ գործոններով.

- համաշխարհային ճգնաժամի հաղթահարումից հետո Եվրոպայի և Ասիայի արդյունաբերական առումով զարգացած տարածաշրջաններում գազի սպառման էական աճի կանխատեսումներով,
- սպառողների ձգտմամբ՝ տարբերակել էներգառեսուրսների հոսքերը՝ իրենց մատակարարումների կայունության ապահովման նպատակով,
- էներգառեսուրսների գների աճի պայմաններում դրանց առաջարկի ծավալներն ավելացնելու ցանկությամբ,
- շեշտադրումը այս տարածաշրջանի նոր նավթատարների շինարարության նախագծերի իրականացումից (հատկապես Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործարկումից հետո) դրանք նավթով լցնելու խնդիրների վրա տեղափոխելով,
- դեպի տարածաշրջան աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հետագա ներթափանցման ձգտմամբ,
- ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ռուսաստանի և ՉԺՀ-ի միջև ընդհանուր աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական մրցակցության հարցերով:

Մինչճգնաժամային շրջանում¹ Ռուսաստանը Եվրոպայի երկրներին մատակարարում էր տարեկան մոտ 160 մլրդ մ³ բնական գազ²: Հաշվի առնելով այն, որ երկարատև հեռանկարում գազի պահանջարկը Եվրոպայում աճելու է, ռուսական գազը, «Wood Mackenzie» կոնսալտինգային ընկերության կանխա-

¹ Հոդվածում դիտարկվում է գազի մատակարարման և սպառման մինչճգնաժամային, կայուն շրջանը:

² Statistical Review of World Energy. www.bp.com, 2008

տեսումներով, կարող է գրավել շուկայի մինչև մեկ երրորդը¹: Իսկ Եվրոպայի որոշ պետություններում ռուսական գազի բաժինը այժմ արդեն գերազանցել է այդ ցուցանիշը (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ԵՄ որոշ երկրների բնական գազի ներկրումը խողովակաշարերով, 2007թ.², մլրդ մ³

	ընդամենը	ՌԴ-ից	բաժինը, %
Մեծ Բրիտանիա	28,0	-	~3
Ֆրանսիա	33,76	7,63	22,6
Իտալիա	72,45	23,80	32,85
Գերմանիա	83,72	35,55	42,46
Լեհաստան	9,30	6,20	66,67

Եվրոպայի գազի շուկայում իր ներկայությունը հետագայում ավելի մեծացնելու Ռուսաստանի ծրագրերը, «Եվրոպայի և Ասիայի սահմանակից տարածաշրջաններում միասնական էներգետիկ և էներգափոխադրական ենթակառուցվածքի ստեղծումը, միջազգային էներգափոխադրական համակարգերի զարգացումը, էներգակիրների ոչ խտրական տարանցման ապահովումը»⁴ էլ ավելի են խորացնում Մոսկվայից չափից ավելի կախման մեջ հայտնվելու երկյուղները: Հարցն այստեղ նրա՝ որպես առևտրատնտեսական գործընկերոջ, հուսալիությունը չէ, անգամ չնայած 2006-ից Ուկրաինայի տարածքով գազի, իսկ 2007-ին՝ Բելառուսի տարածքով նավթի տարանցման առկա դժվարություններին. Ռուսաստանի օպերատիվ հակազդեցությունն այդ դժվարություններին թույլ չտվեց, որպեսզի իր՝ որպես էներգառեսուրսների մատակարարի, նկատմամբ վստահությունը նկատելիորեն նվազի: Ի հավաստումն Ռուսաստանի անվերապահ հուսալիության՝ ռուս փորձագետները պատմական զուգահեռներ են անցկացնում ԽՍՀՄ-ից Արևմուտք մատակարարումների կայունության հետ դժվարին՝ Սառը պատերազմի ժամանակաշրջանում:

Սակայն այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այդ ժամանակաշրջանում Եվրոպայի՝ որպես սպառողի և ԽՍՀՄ-ի՝ որպես մատակարարի կախվածությունը փոխադարձ էր: Այն իրավիճակում, երբ Մոսկվան, այն էլ՝ բավական համառորեն, հսկայական ջանքեր է գործադրում

¹ G.Chazan, Russia Outflanks EU's Pipeline Plan. Wall Street Journal, June 16.

² Նույն տեղում:

³ «Գազպրոմի» ծրագրերի մեջ է մտնում մինչև 2020թ. զբաղեցնել տեղի շուկայի 10%-ը:

⁴ «Энергетическая стратегия России на период до 2020 года», «Внешняя энергетическая политика» բաժին, <http://www.minprom.gov.ru/docs/strateg/1>

իր էներգառեսուրսների արտահանման և առաջին հերթին՝ Չինաստան, երթուղիների դիվերսիֆիկացման ուղղությամբ, ավելի վաղ գոյություն ունեցող փոխկախյալությունն առավել հարաբերական է դառնում:

Անշուշտ, խոսքն այստեղ չի կարող լինել դեպի Եվրոպա գազի մատակարարումների լիակատար դադարեցման կամ նույնիսկ կնքված պայմանագրերով ավելի վաղ ստանձնած պարտավորությունների չկատարման մասին: Սակայն էներգառեսուրսների պակասուրդի պայմաններում, երբ՝

- Եվրոպայի տնտեսության աճը ավելի ու ավելի շատ նավթ ու գազ կպահանջի, իսկ
- ավանդական էներգակիրները այլընտրանքային վերականգնվող աղբյուրներով կամ ատոմային էներգիայով լիակատար փոխարինելուն սպասելը գոնե միջնաժամկետ հեռանկարում անիրական է թվում,

հիմնական մատակարարներից մեկի կողմից, ինչպիսին Ռուսաստանն է, տնտեսական կամ քաղաքական ճնշում բանեցնելու արդյունավետ մեթոդ կարող է դառնալ ոչ միայն էներգակիրների արտահանման ուղղությունների, այլ նաև դրանց *լրացուցիչ*, համեմատաբար ոչ մեծ ծավալների մանիպուլացումը:

Եվրոպային առավել շատ պետք է անհանգստացնեն.

1. Մոսկվայի՝ համաշխարհային գազարդյունահանման (*Աղյուսակ 2*) համակարգում ունեցած դիրքն ավելի ակտիվորեն օգտագործելու ձգտումը՝ իր քաղաքական նպատակներին հասնելու համար: Ռուսաստանի մինչև 2020թ. էներգետիկական ռազմավարությունում ուղղակիորեն ասվում է, որ «էներգետիկ հիմնախնդիրների գլոբալ բնույթը և դրանց էլ ավելի քաղաքականացումը, ինչպես նաև համաշխարհային էներգետիկայի համակարգում Ռուսաստանի վառելիքաէներգետիկ համալիրի ազդեցիկ դրությունը էներգետիկ գործոնը դարձրին ռուսական դիվանագիտության հենակետային տարրերից մեկը»¹:

Ընդ որում՝ նավթի և գազի գործոնի օգտագործումը ռուսաստանյան արտաքին քաղաքականությունում ռուսաստանյան վառելիքաէներգետիկ համալիրի առաջատար ընկերությունների շահերի լոբբավորման դիվանագիտություն կիրառելուն զուգահեռաբար է ընթանալու:

2. Ռուսաստանի փորձերը՝ այս կամ այն տեսքով ստեղծելու վերագազային կառույցներ, գազամատակարար երկրների կողմից համաձայնեցված գնային և արտահանական քաղաքականություն ձևավորելու և վարելու համար:

¹ Նույն տեղում:

Աղյուսակ 2

Կասպյան-կենտրոնասիական տարածաշրջանի երկրների գազարդյունահանումը ¹

	2006, մլրդ մ ³	2007, մլրդ մ ³	արդյունահանման աճը, +/-, տոկոսներով	բաժինը համաշխարհ. արտադրությունում, տոկոսներով
Ադրբեջան	6,3	10,3	+ 63,2	0,3
Ղազախստան	24,6	27,3	+ 10,8	0,9
Ռուսաստան	612,1	607,4	- 0,8	20,6
Թուրքմենստան	62,2	67,4	+ 8,4	2,3
Ուզբեկստան	55,4	58,5	+ 5,6	2,0
Իրան	108,6	111,9	+ 3,0	3,8

Եվրոպան Ռուսաստանից տնտեսական, իսկ ժամանակի ընթացքում՝ նաև քաղաքական կախվածությունը կանխելու մի քանի հնարավորություն ունի.

1. բազմակողմ և երկարաժամկետ համաձայնագրերի ստորագրում էներգառեսուրսների մատակարարների հետ, որոնք կորոշեն հենակետային հարաբերությունները մատակարար-սպառող համակարգում, կկարգավորեն էներգակիրների համաշխարհային շուկան,
2. էներգահաշվեկշռում հեղուկ բնական գազի (ՀԲԳ) բաժնի ավելացումը,
3. էներգառեսուրսների մատակարարումների դիվերսիֆիկացումը՝ ինչպես մատակարարների, այնպես էլ երթուղիների ցանկի ընդլայնման առումով:

Երկարաժամկետ համաձայնագրեր

Էներգակիրների աճող պահանջարկի պայմաններում հասնել այն բանին, որ մատակարարը (առավել ևս՝ Ռուսաստանն իր ինքնաբավության աստիճանով ու հավակնությունների մակարդակով) համընդգրկուն, երկարաժամկետ համաձայնագրեր կնքի, քիչ հավանական է թվում, ինչի մասին կարող է վկայել մասնավորապես, նաև նրա հրաժարումը՝ վավերացնել էներգետիկական խարտիան: Թվում է՝ եթե անգամ հանվեն խարտիայի, Մոսկվայի կարծիքով՝ խտրական դրությունները, դա էլ չի հանգեցնելու դրա նախաստորագրմանը, քանի որ

¹ Statistical Review of World Energy. www.bp.com, 2008

Ռուսաստանը փորձում է, «Էներգետիկ ռազմավարությանը» համապատասխան, իր համար դաշտ մաքրել «Էներգադիվանագիտական» մանևրների համար:

Մոսկվան նման քաղաքականություն է վարում նաև ԱՊՀ ձևաչափում: Որպես օրինակ կարելի է բերել այն, որ 2007թ. հոկտեմբերի 31-ին Մոսկվան դուրս եկավ Համագործակցության երկրների հետ 1996թ. ապրիլին ստորագրված «Նավթը և նավթամթերքները մայրուղային խողովակաշարերով տարանցելու բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» ժամանակավոր համաձայնագրից: Այդ պայմանագրի համաձայն՝ նրա մասնակիցները¹ պարտավորվում էին իրենց տարածքներով անցնող խողովակաշարերով նավթի ու նավթամթերքների ազատ տարանցում ապահովել, ինչպես նաև միակողմանի կարգով չընդունել այնպիսի որոշումներ, որոնք վատթարացնում են տարանցման պայմանները:

Ռուսաստանի այս քայլը պայմանավորված է նրա՝ արտահանման գների, ծավալների և ուղղությունների շուրջ մանևրելու հնարավորություններն ընդլայնելու ցանկությամբ. այժմ Ղազախստանի նավթի տարանցման հարցերը Ռուսաստանի տարածքով, իսկ Ռուսաստանինը՝ Ուկրաինայի ու Բելառուսի տարածքներով կարգավորվելու են բացառապես երկկողմանի պայմանագրերով, որոնք ժամկետների մշտական (որպես կանոն, 2-5 տարվա սահմաններում) երկարաձգում են պահանջում:

Հեղուկ բնական գազ


Եվրոպայի՝ որպես սպառողի, համար ՀԲԳ տեխնոլոգիայի առավել գրավիչ կողմերը հետևյալներն են.

- լրացուցիչ ծավալների ներմուծման օպերատիվ ավելացման հնարավորությունը գազի ամենաշատ սպառման շրջանում,
- դրա մատակարարման հնարավորությունն էլ ավելի մեծ թվով սպառողներին, որոնք «կապված» չեն մայրուղային գազատարների ենթակառուցվածքին,
- առավել ցածր աշխարհաքաղաքական և տարանցիկ ռիսկեր նոր տրանսսահմանային և տրանսկոնտինենտալ գազատարների անցկացման համեմատ:

Միևնույն ժամանակ, գալիչ գործոններ են հանդիսանում.

- գազի նախնական կապիտալ ներդրումների անհրաժեշտությունը,
- գազի հեղուկացման համալիրների շինարարության երկարատևությունը,
- գազահանքերից վերջնական սպառողին գազը հասցնելու ճանապարհին գազի մշակման առավել բարդ տեխնոլոգիաները:

¹ Ուկրաինան և Հայաստանը համաձայնագիրը ստորագրել են վերապահումներով:



Եվրոպայի հանդեպ իր նոր խողովակաշարային քաղաքականությունում Ռուսաստանը, հաշվի առնելով ՀՀԳ տեխնոլոգիաների օգտագործման այս բուլտր ուժեղ և թույլ կողմերը, ձգտում է ոչ միայն խոշոր արտադրող դառնալ, այլև ավելի մեծ դերակատարում ունենալ նրա շուկայում:


Դիվերսիֆիկացումը

Եվ այնուամենայնիվ, էներգետիկ ապահովմանն ուղղված Եվրոպայի քաղաքականության հիմնական բովանդակությունը էներգակիրների աղբյուրների և մատակարարումների ուղղությունների դիվերսիֆիկացումն է:

Աղյուսակ 3

Սշխարհի որոշ երկրների ՀՀԳ արտահանման ծավալների փոփոխության կանխատեսում, մլրդ մ³ («Нафтогаз України» ազգային բաժնետիրական ընկերություն, 2007թ.)

ՀՀԳ արտահանող երկիրը	2005	2006	2015
Կատար	27,1	32,0	115,0
Նիգերիա	12,0	17,6	33,7
Ավստրալիա	14,8	18,0	26,4
Եգիպտոս	6,9	15,0	17,1
Իրան	0,0	0,0	10,8
Ռուսաստան	0,0	0,0	10,6
Եմեն	0,0	0,0	8,8



Եվրամիության և Մերձկասպյան տարածաշրջանի նավթ և գազ արտադրող պետությունների միջև էներգետիկական շուկայի ստեղծման մտադրությունների մասին հնչեցվել է դեռ 2004թ. նոյեմբերի 13-ին, Բաքվում, էներգետիկայի նախարարների մակարդակով տեղի ունեցած կոնֆերանսի ամփոփիչ փաստաթղթում: «Բաքվի նախաձեռնությունը» հետագա զարգացում ստացավ 2006թ. նոյեմբերի 30-ին Աստանայում, նախարարների մակարդակով երկրորդ ԵՄ-ի, մերձսևծովյան և մերձկասպյան երկրների միջև էներգետիկ համագործակցությանը նվիրված կոնֆերանսում, ստորագրված էներգետիկ ճանապարհային քարտեզով: Դրա նպատակն էր Կասպյան տարածաշրջանի նավթ և գազ արտադրողների և ԵՄ սպառողների խողովակաշարային համակարգով ուղղակի կապի նախագծերի իրականացումը: Դեպի Եվրոպա ածխաջրածինների տեղափոխման հիմնական միջանցք հաստատվեց Ռուսաստանը շրջանցող Հարավկովկասյան երթուղին: Ծավալուն այս նախագծի հետագա որոշակիացման խնդիրներին էին նվիրված միջազգային մի շարք էներգետիկ գագաթաժողովներ, ինչպիսիք են, օրինակ, Կրակովի (2007թ. մայիս), Վիլնյուսի (2007թ. նոյեմբեր), Կիևի (2008թ. մայիս), Բաքվի (2008թ. նոյեմբեր), Սոֆիայի (2009թ. ապրիլ) գագաթաժողովները:

**ՆՈՐ ԳԼՈՒԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ «ԽԱՂԱՂ ԱՏՈՄԻ»
ՇՈՒՐՋ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔ»**

Միխայիլ Աղաջանյան

«Համաշխարհային ատոմացման» միջազգային գործընթացի համոզիչ առաջընթացի շուրջ վերջին իրադարձություններն ի հայտ բերեցին այդ գործընթացի հետաքրքիր դինամիկա և ուղղվածություն: Ատոմային էներգիայի քաղաքացիական օգտագործման տեխնոլոգիաների խոշոր պրոդուցենտ երկրները սկսել են, եթե կարելի է այդպես արտահայտվել, խաչաձևվող փոխապայմանավորվածություններ հաստատել երկկողմանի հարաբերությունների զարգացման այս ոլորտում: «Խաղաղ ատոմի» ոլորտում իրենց աշխարհաքաղաքական շահերի տեսակետից թվում է թե անհամատեղելի այնպիսի խոշոր դերակատարներ, ինչպիսիք են, օրինակ, Ռուսաստանը և Ճապոնիան, ռազմավարական պայմանավորվածություններ են կնքում:

2009թ. մայիսի 12-ին, Ռուսաստանի վարչապետ Վ.Պուտինի այցի ժամանակ, ստորագրվել է միջկառավարական համաձայնագիր ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման ոլորտում համագործակցության մասին:

Ռուսաստանը և Ճապոնիան, որոնք մինչ օրս խաղաղ պայմանագիր չեն կնքել Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից ի վեր և որոնց հարաբերություններն այդ պատճառով որոշակի «քաղաքական անհարմարավետություն» են պարունակում, գնացին համաձայնության այնպիսի առանձնահատուկ ոլորտում, որն անմիջականորեն առնչվում է երկու երկրների ազգային անվտանգության շահերի և արտաքին քաղաքական գերակայությունների հետ: Հարավային Կուրիլների շուրջ Ռուսաստանի և Ճապոնիայի միջև չլուծված տարածքային վեճը գայթաքար չդարձավ երկու հարևանների միջև՝ երկու պետությունների համար ընդունելի գործընկերային երկխոսություն սկսելու համար:

Համաձայնագիրն ընդգրկում է համագործակցության հնարավոր ուղղությունների լայն շրջանակ. ուրանի հանքավայրերի հետախուզում և արդյունահանում, թեթև ջրի ռեակտորների նախագծում, կառուցում և գործարկում, ռադիոակտիվ մնացուկների վերամշակում, միջուկային անվտանգություն՝ ներառյալ ճառագայթային պաշտպանությունը և շրջակա միջավայրի նկատմամբ վերահսկողության սահմանումը:

Ճապոնիան վստահորեն զարգացնում է միջուկային էներգետիկայի ներ-

քին շուկան՝ նախատեսելով ավելացնել իր ԱԷԿ-ների արտադրած էլեկտրաէներգիան՝ ներկայիս 30-ից հասցնելով 40%-ի: Երկու երկրների ամենակարևոր ձեռքբերումներից մեկն, ըստ համաձայնագրի, դարձավ այն, որ ռուսական «Ռոսատոմը» և ճապոնական «Toshiba Corporation»-ը ցանկություն են հայտնել ճապոնիայի տարածքում կառուցել համապատասխան հզորությունների չհարստացված ուրանի վերամշակման համար, որը մատակարարվելու է Ռուսաստանից: Մինչև համաձայնագրի ստորագրումը Մոսկվայում ընդգծում էին, որ իրենք նախատեսում են ավելացնել Ռուսաստանի բաժինը ճապոնիայի ատոմային հումքի շուկայում՝ ներկայիս 15%-ից այն հասցնելով 25%-ի¹:

Մինչև համաձայնության կնքումը երկու երկրները հանդես էին գալիս ավելի շուտ որպես ավանդական մրցակիցներ միջուկային էներգետիկայի շուկայի՝ երրորդ երկրներում ուրանի հանքավայրերի մշակման հատվածում: Ռուսաստանի և ճապոնիայի այդ մրցակցությանը կարելի է ականատես լինել Ղազախստանի ուրանի հանքերում, թեև հարկ է նշել, որ այստեղ մրցակցության հիմնական վեկտորը ծավալվում է Ռուսաստանի և Չինաստանի միջև:

Փորձագետները նշում են, որ բնական ուրանի սեփական պաշարների բացակայության պատճառով Տոկիոն խիստ հետաքրքրված է այդ հումքը Ղազախստանից ստանալու հարցում: Հենց դրա համար էլ 2006թ. օգոստոսին, ճապոնիայի այն ժամանակվա վարչապետ Դ. Կոիձումիի Աստանա կատարած այցելության ժամանակ ստորագրվեց ատոմային էներգիայի կիրառման ոլորտում համագործակցության մասին հուշագիր: Այժմ ճապոնիայի կողմից ներմուծվող ուրանի արտադրանքի ղազախական բաժինը կազմում է մոտ 1%, բայց ապագայում այն կարող է հասնել մինչև 30%-ի: Այս պլանների իրագործման համար 2007թ. ապրիլին Աստանայում ստորագրվեց ղազախա-ճապոնական փաստաթղթերի մի ամբողջ փաթեթ, որը, ճապոնական կողմի կարծիքով, թույլ կտա 2-3 անգամ ավելացնել Ղազախստանում արտադրվող ուրանի արտադրանքի ավելացված արժեքը: Ուրանի ղազախական շուկայում առավել մեծ ակտիվություն են ցուցաբերում ճապոնական «Sumitomo Corporation», «Kansai Electric Power Corporation», «Itochu Corporation», «Marubeni Corporation» և «NGK Insulators Inc.» ընկերությունները: 2007թ. հոկտեմբերի 1-ին ճապոնական «Toshiba Corporation» ընկերությունը ղազախական «Ղազատոմարդ»-ին վաճառեց ԱՄՆ-ում միջուկային ռեակտորների հիմնական արտադրող «Westinghouse Electric Company» հոլդինգային ընկերության (որը միաժամանակ նաև ռուսական «Տեխսնաբեքսպորտ»-ի գլխավոր մրցակիցներից է) բաժնետոմսերի 10%-ը: Նման գործողությունների նպատակն այն է, որ 2014-ից լրիվ դադարեցվի ուրանի արտահանումը

¹ Russia, Japan agree nuclear energy pact, http://www.nuclearpowerdaily.com/reports/Russia_Japan_agree_nuclear_energy_pact_999.html, 12.05.2009.

և անցում կատարվի հիմնականում ամերիկյան արտադրության ջերմարձակող պատրաստի սարքերի մատակարարմանն արտերկիր: Բիարկե, նման գործունեությունը չի կարող չանհանգստացնել Ռուսաստանի ղեկավարությանը¹:

Միննույն ժամանակ, ակնհայտ է, որ Վ.Պուտինի Տոկիո կատարած վերջին այցը և «խաղաղ ատոմի» շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունը, միջկառավարական այլ համաձայնագրերի հետ մեկտեղ, զգալիորեն փոխում են շեշտադրումը ռուս-ճապոնական երկկողմ հարաբերություններում՝ մրցակցությունը վերածելով փոխշահավետ համագործակցության, ինչն այնքան կարևոր է Ռուսաստանի և Ճապոնիայի համար՝ որպես Ասիայում ավանդական աշխարհաքաղաքական մրցակիցներ և, միաժամանակ, *G-8-ի* գծով գործընկերներ համաշխարհային տնտեսական անկման պայմաններում:

Ռուսաստանի համար այս և մյուս համաձայնագրերը կարևոր են նաև այն բանի հաշվառմամբ, որ 2012թ. Վլադիվոստոկում տեղի է ունենալու Ասիա-խաղաղովկիանոսյան տնտեսական համագործակցության (ԱԽՏՀ) զագաթաժողովը:

«Խաղաղ ատոմի» տեխնոլոգիաների մյուս հիմնական պրոդուցենտները նույնպես ձեռքները ծալած չեն նստել: Դեռ անցյալ տարի ԱՄՆ-ը միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցության համապատասխան համաձայնագիր է ստորագրել Հնդկաստանի հետ, իսկ Ֆրանսիան շատ մոտ է այն բանին, որ որպես առաջատար մտնի Սաուդյան Արաբիայի ձևավորվող միջուկային էներգետիկայի շուկա: Այս առնչությամբ ֆրանսիական կողմի համար խոստումնալից էր Ֆրանսիայի էկոնոմիկայի նախարարի այցելությունը Էր Ռիադ այս տարվա մայիսի 9-ին: Սաուդյանների հետ հնարավոր համաձայնագրի մանրամասներում չխորանալով՝ ֆրանսիացի նախարարը լավատեսություն հայտնեց, որ համաձայնագիրը կարող է ստորագրվել մինչև 2009թ. ավարտը:

Հատկանշական է, որ վերը նշված օրինակներն ընդգրկում են Ասիա աշխարհամասն իր ողջ տարածքային արեալով. Սաուդյան Արաբիայից մինչև աշխարհամասի արևմուտք, միջին գծով՝ Հնդկաստանով մինչև արևելքի ծայրագույն կետը, Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջանը՝ հանձին Ճապոնիայի: 2008թ. սկզբին փորձագիտական եզրակացություններ և կանխատեսումներ էին արվում այն մասին, որ միջուկային արտադրահզորությունների առավել մեծ աճ ներկայում և ըստ կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների՝ նկատվում է Ասիայում: Կառուցվող 34 ռեակտորներից 19-ը գտնվում են Ասիայում, 39 նոր՝ ցանցին միացված ռեակտորներից 28-ը գտնվում են Ասիայում: Աշխարհամասը ռեկորդակիր է նաև միջուկային էներգետիկայի շուկայում այնպիսի կարևոր չափանիշի գծով, ինչպիսին է ԱԷԿ նոր բլոկների շինարարության տևողությունը: Տնտեսական համագործակցության և զարգացման

¹ *Владимир Евсеев*, Проблемы российско-казахстанского сотрудничества в ядерной сфере под углом евразийской интеграции <http://www.ia-centr.ru/expert/4649/>, 15.05.2009.

կազմակերպության (ՏՀԶԿ) տվյալներով՝ Ասիայում ԱԷԿ բլոկի կառուցման միջին տևողությունը հասել է 62 ամսվա: 2001թ. դեկտեմբերից մինչև 2007թ. մայիս ընկած ժամանակահատվածում ցանցին միացված 18 բլոկներից 3-ը կառուցվել են 48 ամսում կամ նույնիսկ ավելի արագ¹:

Վերջին ժամանակներս հետաքրքիր է նաև այն, որ խոշոր երկրները ոչ միայն հաճույքով են գնում այլ պետությունների հետ հարաբերությունների սուր անկյունները հարթելուն, այլև միանգամայն համարժեք են ընկալում իրենց գործընկերների ցանկացած նախաձեռնություն այն պետությունների հետ կապերի զարգացման ուղղությամբ, որոնց հետ սկզբունքային արտաքին քաղաքական տարաձայնություններ ունեն: Ռուս-ճապոնական հարաբերություններում ներկա փուլում որպես ավաճի վկայություն կարելի է բերել Ճապոնիայի արձագանքը Հարավային Օսիայի շուրջ անցած տարվա իրադարձություններին և Ռուսաստանի տրամադրվածությունը՝ հաստատել փոխշահավետ կապեր միջազգային ասպարեզում սահմանափակ ճանաչում ստացած այնպիսի պետական կազմավորման հետ, ինչպիսին Թայվանն է²: Ի դեպ, վերջինը վճռականորեն է տրամադրված իր տարածքում «խաղաղ ատոմի» ոլորտը զարգացնելու հարցում³:

Միջուկային էներգետիկայի ոլորտում պետությունների համագործակցու-

¹ *Nuclear Energy Outlook 2008*. OECD. November 2008. p. 4.

² 2009թ. մարտի 10-ին Ճապոնիայի ԱԳՆ ղեկավար Խ.Նակասունեն հայտարարեց, թե իր երկիրը պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը և չի ճանաչում Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության միակողմանի հռչակումը: Ավելի վաղ, 2008թ. հոկտեմբերին, Տոկիոն Թբիլիսիին վարկ էր տրամադրել \$200 մլն-ի չափով՝ Հարավային Օսիայում հակամարտության ժամանակ ավերված ենթակառուցվածքի վերականգնման համար: Ճապոնիայի ԱԳՆ հայտարարությամբ Տոկիոն ակտիվ աջակցություն ցուցադրեց Վրաստանի ժողովրդավարական և շուկայական գործընթացներին և իր ավանդը ներդրեց Կովկասում իրադրության կայունացման գործում: Ռուսաստանի մայրաքաղաքում գործում է տնտեսական և մշակութային համագործակցության Թայբեյ-մոսկովյան համակարգող հանձնաժողովը: Այդ հանձնաժողովի ղեկավար Ս.Գուբարևը Թայվանի միջազգային ռադիոյին տված հարցազրույցում հայտարարել է, որ Ռուսաստանն աջակցում է Թայվանի նեղուցի կողմերի միջև հարաբերությունների խաղաղ զարգացմանը: «Ռուսաստանն այն դիրքորոշմանն է, ըստ որի՝ անհրաժեշտ է իրավիճակի կարգավորում տարածաշրջանում: Եվ, որ ամենակարևորն է, կարգավորումը պետք է իրականանա խաղաղ եղանակներով: Մենք սկզբունքորեն դեմ ենք պատերազմին», - հայտարարել է Ս.Գուբարևը: Նա նաև նշել է, որ Թայվանի և Ռուսաստանի միջև տնտեսական կապերի հետագա զարգացման մեծ հնարավորություն կա. «Ամեն տարի Ռուսաստան այցելող թայվանցի զբոսաշրջիկների թիվը կազմում է 15 հազար մարդ: Երկկողմանի առևտրի ծավալը հավասար է \$4 մլրդ-ի: Ավելի քան 200 ռուսաստանցի ուսանողներ ուսում են ստանում թայվանյան բուհերում, ընդ որում՝ նրանք ուսումնասիրում են ոչ միայն չինարեն, այլև քաղաքականություն, մշակույթ: Իսկ ռուսաստանյան բուհերում ուսանում են մոտ 300 թայվանցի ուսանողներ» (*Тайвань: новости политики, экономики, культуры (февраль 2009)*, <http://www.taiwanembassy.org/ct.asp?xItem=82875&ctNode=1866&mp=237>).

³ 2007թ. վերջի դրությամբ Թայվանն ուներ երեք ԱԷԿ. «Chinshan» (2 ռեակտոր՝ յուրաքանչյուրը 604 մվտ հզորությամբ), «Kuosheng» (2 ռեակտոր՝ յուրաքանչյուրը 948 մվտ հզորությամբ) և «Maanshan» (2 ռեակտոր՝ յուրաքանչյուրը 890 մվտ հզորությամբ) (*Мировая ядерная энергетика в 2007 году*, <http://www.proatom.ru/modules.php?name=News&file=print&sid=1216, 05.02.2008>).

թյունը ներկա փուլում դիտարկվում է որպես հարմար հարթակ՝ հանելու երկկողմ հարաբերությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմանափակիչները: Աշխարհի խոշոր երկրները միանգամից չէ, որ հանգեցին այս տեսակետին. այն ապագա երկխոսության որոնմանն ուղղված փոխշահավետ հիմքեր գտնելու երկարատև և հաճախ՝ տառապալի գործընթաց էր: Ավելի փոքր երկրները, որոնց հարաբերությունները բարդացվում են փոխադարձ կասկածների բեռով, հաճախ էլ՝ շարունակական հակամարտություններով, դեռ չեն եկել նման իրավիճակներում միակ ճիշտ որոշմանը. ժողովրդավարական երկրների միջև ցանկացած հակամարտության լուծման համար անհրաժեշտ է նրանց հասարակությունների վստահությունը միմյանց նկատմամբ, իսկ նման վստահության ձեռքբերումն անիմաստ է առանց տնտեսական կապերի և սոցիալական առնչությունների հաստատման և աստիճանական զարգացման պետության և քաղաքացիական հասարակության մակարդակներով: Այս համատեքստում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ինչպես ասում են՝ զրոյից ռուս-ճապոնական հարաբերությունների սկսման փորձը խիստ հատկանշական է և օգտակար հիմնավորումներ է պարունակում նման իրավիճակում գտնվող այլ երկրների համար: Այսպես, Ռուսաստանի վարչապետի՝ ճապոնացի գործընկերոջ հետ համատեղ ամփոփիչ մամուլի ասուլիսին, ճապոնական տեղեկատվական գործակալության թղթակցի հարցին՝ «Վերջին ժամանակներս խոսում են ոչ թե չորս, այլ երեքուկես կողմերի վերադարձի մասին... Ճապոնիայի հանրային կարծիքում մտավախություն կա, որ տարածքային խնդիրների շուրջ կոնկրետ առաջխաղացում չկա, այլ միայն տնտեսական համագործակցությունն է զարգանում: Դա կարող է հանգեցնել այն բանին, որ տարածքային խնդիրները կարող են երկար ժամանակով հետաձգվել: Ի՞նչ կպատասխանեիք այս մտավախությանը», Ռուսաստանի կառավարության դեկավարը մասնավորապես նշել է. «Մենք բանակցություններ ենք վարում խաղաղ պայմանագիր կնքելու ոչ նրա համար, որ տնտեսական համագործակցության պայմաններ ստեղծենք: Մենք զարգացնում ենք տնտեսական համագործակցությունն այն բանի համար, որ խաղաղ պայմանագիր ստորագրելու պայմաններ ստեղծենք»:

Թերևս, նման շեշտադրումը համապատասխանում է, օրինակ, Ղարաբաղյան կարգավորման շուրջ տիրող իրավիճակին: Վերջինին խառն են ազդեցության բազմաթիվ տարածաշրջանային համատեքստեր, և առկա են բազմաթիվ, ինչպես նպաստող, այնպես էլ կարգավորմանը խանգարող գործոններ: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ առանց կողմերի հաշտեցման, առաջին հերթին իրենց հասարակությունների մակարդակով, արդյունավետ կարգավորման մասին խոսելն իմաստ չունի: Հասարակությունը պետք է հասկանա, զգա, որ կարգավորումն իր համար շահավետ է և անհրաժեշտ է թվում առա-

վել ամրապնդվող տնտեսական կապերի և սոցիալական առնչությունների լույսի ներքո: Այստեղ կարող է և պետք է իր դերակատարումն ունենա հակամարտության բոլոր կողմերի և տարածաշրջանի այլ շահագրգիռ երկրների միջև երկարատև պոտենցիալ համագործակցության այնպիսի ոլորտը, ինչպիսին է միջուկային էներգետիկան:

Այս ֆոնին ապակառուցողական են թվում որոշ փորձագետների առաջարկությունները Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ, ովքեր վերջին ժամանակներս անդրադարձել են «խաղաղության պարտադրման» թեմային: Ամեն նոր բան, ինչպես հայտնի է, լավ մոռացված հինն է: Բայց «խաղաղության պարտադրանքը» թարմ պատում է Բալկաններում խաղաղարարության մասին, որը ցույց է տալիս իր սահմանափակությունն ու վնասակարությունը գերբարդ, էթնիկ, պատմական, սոցիոմշակութային և քաղաքական գործոններով միահյուսված տարածաշրջաններում: «Խաղաղության պարտադրանքի» գործիքին դիմելն անխուսափելիորեն պահանջում է գործի դնել հակամարտության կողմերին ճնշելու ռազմական մեթոդները: Այն, ինչ փորձարկվեց նախկին Հարավսլավիայում, էլ ավելի մեծ ապակայունացնող դեր կունենա Ղարաբաղի շուրջ: «Խաղաղություն կարող են պարտադրել» միայն ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամները: Նրանցից ո՞վ կանի դա, օրինակ, Երևանի կամ Ստեփանակերտի հանդեպ: Ռուսաստանը, որը ռազմավարական հարաբերություններ ունի հայոց պետականության հետ Հարավային Կովկասում, թե՛ ԱՄՆ-ը՝ իր շատ պատկառելի հայ սփյուռքով, գուցե Ֆրանսիան, որը ոչ պակաս ազդեցիկ հայ սփյուռք ունի և ոչ պակաս սերտ կապեր Հայության հետ:

Եթե խոսենք էլ ինչ-որ պարտադրման մասին Ղարաբաղյան կարգավորման հարցում, ապա դա կարող է լինել միայն «համագործակցության պարտադրանք» հակամարտության բոլոր կողմերին: ՄԱԿ ԱԽ մշտական անդամները, նույն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները (գումարած Մեծ Բրիտանիան և Չինաստանը), նույն իրենք՝ աշխարհի խոշորագույն տնտեսությունները և միջուկային տեխնոլոգիաների խոշորագույն պրոդուցենտ երկրները կարող են համագործակցություն «պարտադրել» Հարավային Կովկասի բոլոր հանրապետություններին, ինչպես նաև Կովկասի տարածաշրջանային բոլոր տերություններին, օրինակ՝ այնպիսի փոխկապակցող ընդհանուր պարտավորություններով ու պատասխանատվությամբ ոլորտում, ինչպիսին է միջուկային էներգետիկան:

Նման «պարտադրանքից» կշահեն բոլորը, և երկարատև հեռանկարի համար պարտվողներ պարզապես չեն լինի:

**«ԳԼՈՒԲՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր**
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221՝ տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 21.07.2009թ.

Թիվ 4, 2009թ.

Տպաքանակը՝ 200:

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 15 մամուլ:
Տարատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինո» ՍՊԸ տպարանում